

ԱՊՀ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԻՋԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՎԵՀԱԺՈՂՈՎ

*Ժողովրդավարության զարգացման, պաշտամենտարիզմի և
քաղաքացիների ընտրական իրավունքների պաշտպանության
մոնիտորինգի միջազգային ինստիտուտի երևանյան մասնաճյուղ*

ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ

ԴՐԱ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԸՍՏ ՀՀ

ՆՈՐ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ

Սեմինար-քննարկման նյութերի ժողովածու

4 մարտի 2017թ.

ԵՐԵՎԱՆ
ՀԱՅՐԱՊԵՏ
2017

ՀՏԴ 342.8 (07)
ԳՄԴ 67.400.5գ7
Հ 247

Խմբագիր՝

Վահրամ Ավետիսյան

*ԱՊՀ ՄԽՎ ԺԶՄՄԻ երևանյան մասնաճյուղի տնօրեն,
իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

Հ 247 Դիտորդական առաքելությունը և դրա իրականացման կարգը ըստ ՀՀ նոր ընտրական օրենսգրքի (Սեմինար-քննարկման նյութերի ժողովածու, 4.03.2017) / Վ.Դ. Ավետիսյան – Եր.: Հայրապետ հրատ., 2017: – 80 էջ:

Ժողովածուն ամփոփում է ԱՊՀ մասնակից պետությունների Միջխորհրդարանական Վեհաժողովի ժողովրդավարության զարգացման, պառլամենտարիզմի և քաղաքացիների ընտրական իրավունքների պաշտպանության մոնիթորինգի միջազգային ինստիտուտի երևանյան մասնաճյուղի (այսուհետ՝ Մասնաճյուղ) կողմից 2017թ. մարտի 4-ին կազմակերպված՝ **«Դիտորդական առաքելությունը և դրա իրականացման կարգը ըստ ՀՀ նոր ընտրական օրենսգրքի»** խորագրով սեմինար քննարկման նյութերը:

Մասնաճյուղը Հայաստանի Հանրապետությունում գործունեություն է ծավալում շուրջ հինգ տարի, որի ընթացքում իրականացրել է բազմաթիվ ծրագրեր, որոնք նվիրված են եղել ժողովրդավարության, պառլամենտարիզմի և ընտրական իրավունքի իրականացման խնդիրների վերհանմանն ու այդ իրավունքների իրականացմանը օժանդակելուն (Մասնաճյուղի կողմից իրականացված աշխատանքներին կարող եք ծանոթանալ www.mimrd.am կայքում): Ժողովածուի մեջ տեղ են գտել դիտորդական առաքելության էությանը և խնդիրներին, դիտորդական առաքելության իրավական կարգավիճակին և գործունեության երաշխքներին, ընտրական վարչարարությանը դիտորդի մասնակցության առանձնահատկություններին և միջազգային դիտորդական առաքելության փորձին վերաբերող ոլորտի առաջատար հայ և ռուս մասնագետների զեկույցները:

Այն կարող է օգտակար լինել դիտորդական առաքելություն իրականացնող քաղաքացիների և կազմակերպությունների, իրավաբանական բուհերի ուսանողների, ասպիրանտների, դասախոսների և ընտրական իրավունքի խնդիրներով հետաքրքրվող անձանց համար:

ՀՏԴ 342.8(07)

ԳՄԴ 67.400.5 գ7

ISBN 978-9939-838-49-9

© ԱՊՀ ՄԽՎ խորհրդի քարտուղարություն, 2017

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հասմիկ Ենգոյան

ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ
ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ 4

Լիլիա Հակոբյան

ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ
ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ..... 21

Գևորգ Դանիելյան

ԸՆՏՐԱԿԱՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ԴԻՏՈՐԴՆԵՐԻ
ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 56

Հասմիկ Ենգոյան
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի
սահմանադրական իրավունքի ամբիոնի դոցենտ, ի.գ.թ.

**ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ԷՌԻԹՅՈՒՆԸ ԵՎ
ԽՆԴԻՐՆԵՐԸ**

ՀՀ Սահմանադրության 2-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովրդին: Ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով:

Այսպիսով, ՀՀ Սահմանադրության համաձայն, ազատ ընտրությունները և հանրաքվեն հանդիսանում են ժողովրդին պատկանող իշխանության իրականացման անմիջական միջոց, եղանակ: Պետական և մունիցիպալ իշխանության լեգիտիմությունը, օրինականությունը, ինչպես նաև ժողովրդի վստահությունը իշխանության նկատմամբ մեծապես պայմանավորված են արդար և օրինական ընտրություններով:

Ընտրությունները հանդիսանում են ժողովրդավարության կարևորագույն տարրերից մեկը, ժողովրդավարության առկայության նախապայմանը: Ժողովրդավարական պետությունների քաղաքական-իրավական համակարգի հիմքում ընկած են հենց ազատ, արդար և թափանցիկ ընտրությունները՝ որպես սահմանադրական կարգի հիմնական բաղկացուցիչ տարր:

Ընտրությունները իրենցից ներկայացնում են միջոցառումների ամբողջություն, որոնց միջոցով ձևավորվում են պետական իշխանության և տեղական ինքնակառավարման համապատասխան մարմինները: Ընտրությունների միջոցով քաղաքացիներն իրականացնում են իրենց կարևորագույն քաղաքական իրավունքներից մեկը, որոշում իրենց ներկայացուցիչներին համապատասխան ընտրովի մարմնում և օժտում նրանց ժողովրդաիշխանության իրականացման մանդատներով՝ սահմանադրությամբ նախատեսված շրջանակներում: Ընտրությունները, որպես պետական իշխանությունների ձևավորման առավելագույն ժողովրդավարական մեթոդ, կիրառվում են ժամանակակից գրեթե բոլոր երկրներում: Մակայն, անհրաժեշտ է նկատել, որ ինչպես ցանկացած քաղաքական երևույթում, ընտրությունների ընթացքում նույնպես նկատվում են օրենքի բազմաթիվ խախտումներ, որոնք խաթարում են ընտրությունների կազմակերպումը և անցկացումը, ընտրությունների արդյունքների ամփոփումը և այլն: Ընտրական գործընթացում թույլ տրված ամենատարածված խախտումը ընտրողների ձայների և, ընդհանուր առմամբ, ընտրությունների կեղծումն է:

«Կարևոր չէ, թե ինչպես կքվեարկեն, կարևորը, թե ինչպես կամփոփվեն արդյունքները»: Այս արտահայտությունը, որը արել է Իոսիֆ Մտալինը, ավելի, քան կես դար առաջ, մինչև օրս օգտագործվում են տարբեր քաղաքական գործիչների կողմից որպես ասացվածք: Այնուամենայնիվ, բռնապետական ռեժիմի այս կարգախոսը բացարձակ անընդունելի է ժամանակակից ժողովրդավարական կարգերի պայմաններում:

Պատմությանը հայտնի են այնպիսի կորումպացված ընտրություններ, որոնք անգամ ընգրկվել են Գինեսի ռեկորդների գրքում: Այսպես, Լիբերիայի Նախագահ Չարլզ Կինգը 1927 թվականին վերադարձավ իշխանության՝ ընտրությունների ժամանակ «հաղթելով» Ազգային կուսակցության թեկնածու Տոմաս Ֆոլկերին: Պաշտոնական տվյալների համաձայն՝ Կինգի օգտին քվեարկել էին 234 հազար ընտրող, այն դեպքում, երբ ընտրողների ցուցակներում գրանցված անձանց թիվը 15 անգամ պակաս էր:¹

Մրանից առաջանում է անհրաժեշտություն ընտրությունների ընթացքում ներգրավել մի այնպիսի կողմնակի ուժ, որը կարող է իրականացնել հսկողություն քաղաքացիների ընտրական իրավունքի ապահովման նկատմամբ, հավաքել օբյեկտիվ և ամբողջական տեղեկատվություն ընտրությունների ընթացքի վերաբերյալ և այդ եղանակով նվազագույնի հասցնել ընտրությունները կեղծելու հնարավորությունը: Նման առաքելություն կարող են իրականացնել դիտորդները:

Դիտորդական առաքելությունը նոր իրավական ինստիտուտ է մեր իրականության համար:

Ընտրությունների նկատմամբ հսկողությունը դիտորդական առաքելությունների կողմից անհրաժեշտ է ինչպես կայացած ժողովրդավարություն ունեցող երկրների համար, այնպես էլ ժողովրդավարական զարգացման ուղի բռնած պետությունների համար:

Ինչպես ներպետական, այնպես էլ արտասահմանյան երկրների սահմանադրական պրակտիկան վկայում է այն

¹ Տե՛ս՝ Избирательное право и избирательный процесс в Российской Федерации: Учебник для вузов /Отв. ред. А. А. Вешняков. - М., 2003.

մասին, որ դիտորդների ներկայությունը ընտրությունների ընթացքում նպաստում է թափանցիկ և հրապարակային ընտրական մթնոլորտի ձևավորմանը, ինչը իր հերթին ամրապնդում է քաղաքացիների վստահությունն առ այն, որ ընտրությունները անցկացվում են արդար և օբյեկտիվ, ինչն էլ իր հերթին հանգեցնում է ընտրողների ակտիվ մասնակցությանը ընտրական գործընթացին:²

Դիտորդների կողմից ընտրական գործընթացի նկատմամբ իրականացվող մոնիտորինգի հիմնական նպատակը ընտրությունների նախապատրաստման և անցկացման օրինականության ապահովումն է: Դիտորդները հանդես են գալիս որպես այսպես կոչված միջնորդ դատավոր՝ արբիտր, տեղեկատվության անկողմնակալ աղբյուր, ով օգնում է լուծել վիճելի խնդիրները: Դիտորդների մասնակցության շնորհիվ հնարավոր է լինիում ձեռք բերել օբյեկտիվ տեղեկատվություն ընտրությունների արդյունքների իրական պատկերի վերաբերյալ:

Դիտորդների ներկայությունը ընտրական տեղամասային կենտրոններում նվազագույնի է հասցնում ընտրությունների կեղծման և ընտրական գործընթացի խախտման հնարավորությունը: Ավելին, դիտորդական գործունեությունը հնարավորություն է տալիս բացառել ներագդումը ընտրողների ազատ կամաարտահայտման վրա:

Դիտորդների կողմից ընտրական գործընթացների նկատմամբ պատշաճ հսկողությունը մեծ դեր և նշանակություն ունի պետական իշխանության նկատմամբ վստահության ամրապնդման գործում:

² Տե՛ս՝ նույն տեղում:

Դիտորդների հիմնական առաքելությունն օրինակա- նության ապահովումն է քվերակության և ընտրությունների արդյունքների ամփոփման փուլում: Դիտորդների ներկա- յությունը օգնում է զերծ մնալ ընտրությունների արդյունքնե- րի խեղաթյուրման հնարավորությունից, բացառել հնարա- վոր այլ ընտրախախտումները:

Հայաստանի Հանրապետությունում դիտորդների դերը կարևորվում է նաև նրանով, որ ընտրությունների նկատմամբ թերահավատորեն տրամադրված հասարակությունը դիտոր- դական հսկողության շնորհիվ գիտակցում է ընտրություննե- րին մասնակցելու անհրաժեշտությունը և կարևորությունը, ինչպես նաև հնարավոր համարում ժողովրդավարական ընտրությունների անցկացումը՝ առանց ընտրակեղծիքների:

Հանրապետության ներկա քաղաքական իրավիճակում առավել կարևոր է ձևավորել քաղաքացիական գիտակցու- յուն առ այն, որ ընտրությունները կարող են անցկացվել ար- դար, օբյեկտիվ և օրինական:

Եվ իսկապես, հրապարակայնության մթնոլորտը, որը ձևավորվում է ընտրությունների ընթացքում դիտորդների մասնակցության շնորհիվ, նպաստում է քաղաքացիների ակ- տիվ մասնակցությանը ընտրական գործընթացին, իսկ դի- տորդների հաշվետվություններն ու զեկույցները իրենց հեր- թին նպաստում քաղաքական և օրենսդրական փոփոխու- յուններին:

Անկախ դիտորդական առաքելություն իրականացնող խմբի կողմից տրված գնահատականներն իրենց ուղղակի ազդեցությունն են ունենում ընտրական գործընթացը, ընդ- հանուր առմամբ, օրինական ճանաչելու հարցում: Դիտորդ-

ների դրական գնահատականը նպաստում է քաղաքացիների և կուսակցությունների կողմից ընտրությունների արդյունքների ճանաչմանը և հակառակը՝ բացասական գնահատականը կարող է հանգեցնել ընտրությունների արդյունքների դատական կարգով վիճարկմանը:

Դիտորդը միաժամանակ և՛ հսկող է, և՛ վկա: Նա վկան է բոլոր այն իրադարձությունների, որոնք տեղի են ունենում քվեարկության օրը տեղամասային կենտրոնում: Դիտորդը իրավունք ունի և միևնույն ժամանակ պարտավոր է արձանագրել քվեարկության ընթացքում թույլ տրված բոլոր խախտումները և ներկայացնել դրանք համապատասխան պաշտոնատար անձանց: Դիտորդը նաև ընտրությունները հսկող անձն է, քանի որ վերջինիս նպատակն է ապահովել, որպեսզի ընտրական գործընթացի բոլոր սուբյեկտները պահպանեն ընտրական օրենսդրության դրույթները և ամբողջ ծավալով օգտվեն իրենց ընձեռնված իրավունքներից:

Ելնելով վերոգրյալից՝ կարելի է առանձնացնել դիտորդական առաքելության հետևյալ հիմնական նպատակները.

1. Հսկողություն է իրականացնում ընտրական գործընթացի նկատմամբ:

2. Կանխարգելում է ընտրական օրենսդրության դրույթների խախտումները:

3. Ամրապնդում է ընտրությունների նկատմամբ վստահությունը:

4. Բարձրացնում է քաղաքացիների քաղաքական ակտիվությունը:

5. Հսկողություն է իրականացնում ձայների ճշգրիտ հաշվարկման նկատմամբ:

6. Վեր է հանում ընտրական օրենսդրության խախտման փաստերը:

7. Լուսաբանում է քվերակության օրվա ընթացքում տեղի ունեցած իրադարձությունները:

8. Գնահատում է ընտրությունները:

9. Իրավախախտում հայտնաբերելու դեպքում դրդում է պետական իշխանությանը ձեռնարկել համապատասխան միջոցներ:

10. Նպաստում է ընտրական պրակտիկայի կատարելագործմանը:

11. Գնահատում է ներպետական օրենսդրությունը միջազգային նորմերին համապատասխան լինելու տեսանկյունից:

Ընտրական իրավունքում դիտորդների իրավական ինստիտուտը հասկացվում է երեք իմաստով.

1. Իրավական նորմերի ամբողջություն, որոնք կարգավորում են այնպիսի հասարակական հարաբերություններ, որոնք ծագում են քվեարկության և ձայների հաշվարկման փուլում դիտորդների մասնակցությամբ:

2. Անձինք (ՀՀ և օտարերկրյա քաղաքացիներ), ովքեր ունեն դիտորդի կարգավիճակ և օժտված են ընտրությունների և հանրաքվեի օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելու իրավասությամբ:

3. Ընտրությունների և հանրաքվեների օրինականությունը գնահատելու իրավական միջոց, գործիք:

Ըստ լիազորությունների իրականացման ժամկետների՝ դիտորդները լինում են ***երկարաժամկետ և կարճաժամկետ***:

Երկարաժամկետ դիտորդները գնահատում են ընտրությո-

յունների օրինականությունը ընտրական գործընթացի բոլոր փուլերում: Այս դիտորդները հետապնդում են երկու նպատակ. նրանք հավաքում և վերլուծում են ընտրությունների հետ կապված տեղեկատվությունը, ինչպես նաև նախապատրաստում համապատասխան հենք կարճաժամկետ դիտորդների համար: Մինչդեռ կարճաժամկետ դիտորդները իրականացնում են իրենց լիազորությունները բացառապես քվեարկության օրը:

Այսպիսով, երկարաժամկետ դիտորդները իրականացնում են հսկողություն ընտրական գործընթացի բոլոր փուլերի օրինականության նկատմամբ, իսկ կարճաժամկետ դիտորդները քվեարկության օրը հսկում են քվեարկության ընթացքը՝ կանխելով ձայների հաշվարկման և արդյունքների ամփոփման փուլում հնարավոր խախտումները:

2016թ. մայիսի 25-ին ընդունված ՀՀ ընտրական օրենսգրքի համաձայն՝ դիտորդները կարող են լինել միայն կարճաժամկետ, քանի որ նրանք իրականացնում են իրենց լիազորությունները բացառապես քվեարկության օրը: Մինչդեռ մինչև քվեարկության օրը ընտրական գործընթացը անցնում է մի շարք կարևոր փուլեր՝ թեկնածուների գրանցում, նախընտրական քարոզչություն և այլն:

Պետության պատկանելության տեսանկյունից դիտորդները լինում են **ազգային և միջազգային**: Պետք է նշել, որ օրենսդրությունը չի սահմանում ազգային կամ միջազգային դիտորդների հասկացությունը, սակայն այդ երկու հասկացությունները լայնորեն օգտագործվում են տեսական գրականության մեջ: Այդ երկու տեսակի դիտորդների իրավական կարգավիճակում կան բազմաթիվ նմանություններ, չնայած

առկա են նաև որոշակի տարբերություններ: Սակայն գլխավորը, ինչը միավորում է թե՛ միջազգային և թե՛ ներպետական դիտորդներին, ընտրությունների անցկացման օրինականության նկատմամբ հսկողությունն է:

Դիտորդների իրավական ինստիտուտին նվիրված են 2016թ. մայիսի 25-ին ընդունված ՀՀ ընտրական օրենսգրքի 30-32-րդ հոդվածները:

Մինևույն ժամանակ դիտորդական առաքելության իրավական կարգավիճակը ամրագրված է նաև մի շարք միջազգային փաստաթղթերում:

Դիտորդների իրավական կարգավիճակը կարգավորող հիմնական միջազգային փաստաթղթերի շարքում իր ուրույն տեղն է գրավում 2002 թվականի հոկտեմբերի 2-ի «Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետություններում ժողովրդավարական ընտրությունների, ընտրական իրավունքների և ազատությունների չափանիշների մասին» կոնվենցիան (այսուհետ՝ Կոնվենցիա):³

Վերոհիշյալ Կոնվենցիայով ամրագրված է ազգային և միջազգային դիտորդների իրավական կարգավիճակը և լիազորությունները:

Այսպես, Կոնվենցիայի 14-րդ հոդվածը նվիրված է ազգային դիտորդների կարգավիճակին և լիազորություններին: Ըստ վերոհիշյալ հոդվածի՝ յուրաքանչյուր թեկնածու, յուրաքանչյուր քաղաքական կուսակցություն (դաշինք), այլ հասարա-

³ Տե՛ս՝ Конвенция о стандартах демократических выборов, избирательных прав и свобод в государствах-участниках Содружества Независимых Государств: Документы и материалы /отв. ред. В.И. Лысенко. – М.: РЦИОИТ, 2008. – С. 11.

կական միավորում, ընտրողների խումբ, Սահմանադրությամբ, օրենքներում նշված՝ ընտրությունների այլ սուբյեկտներ իրավունք ունեն օրենքներով կամ ընտրությունները կազմակերպող մարմինների կողմից ընդունվող նորմատիվ ակտերով սահմանված կարգով նշանակել ազգային դիտորդներ, որոնք իրավունք ունեն քվեարկության օրը, այդ թվում՝ վաղաժամկետ քվեարկության օրը, քվեարկության համար հատկացված տարածքում իրականացնել դիտարկում:

Ըստ վկայակոչված հոդվածի՝ ազգային դիտորդներին պետք է տրվեն հետևյալ իրավունքները.

ա) ծանոթանալ ընտրությունների մասին օրենքներում նշված ընտրական փաստաթղթերին, տեղեկատվություն ստանալ քվեարկության համար ընտրողների ցուցակներում ընդգրկված ընտրողների թվի և քվեարկությանը մասնակցած, այդ թվում՝ վաղաժամկետ և քվեարկության համար նախատեսված տարածքից դուրս քվեարկած ընտրողների թվի վերաբերյալ.

բ) ներկա գտնվել քվեարկության համար նախատեսված տարածքում.

գ) հետևել ընտրողներին քվեաթերթիկների հանձնմանը.

դ) ներկա գտնվել վաղաժամկետ քվեարկության անցկացմանը, քվեարկության համար նախատեսված տարածքից դուրս քվեարկությանը.

ե) քվեաթերթիկների հաշվարկման ընթացակարգի տեսանելիությունն ապահովող պայմաններում հետևել ընտրողների ձայների հաշվարկմանը.

զ) հետևել ընտրական մարմնի կողմից քվեարկության, ընտրությունների արդյունքների արձանագրությունների և

այլ փաստաթղթերի կազմմանը, ծանոթանալ թվեարկության արդյունքների վերաբերյալ ընտրական մարմնի արձանագրությանը, այդ թվում կրկնակի կազմվող արձանագրությանը, ազգային օրենսդրությամբ նախատեսված դեպքերում և կարգով՝ համապատասխան ընտրական մարմնից ստանալ նշված արձանագրությունների հաստատված պատճենները.

ե) քվեարկության կազմակերպման հարցերի վերաբերյալ առաջարկություններով և դիտողություններով դիմել ընտրական մարմին.

ը) բողոքարկել ընտրական մարմնի, ընտրական մարմնի անդամների որոշումները և գործողությունները (անգործությունը) անմիջական վերադաս ընտրական մարմին կամ դատարան:

Կոնվենցիայի 15-րդ հոդվածը սահմանում է միջազգային դիտորդների կարգավիճակը և լիազորությունները: Ըստ վերոհիշյալ հոդվածի՝ կողմերը հաստատում են, որ միջազգային դիտորդների ներկայությունը նպաստում է ընտրությունների թափանցիկությանը և հրապարակայնությանը, պետությունների միջազգային պարտավորությունների պահպանմանը: Միջազգային դիտորդները երկրի տարածք մուտք գործելու թույլտվություն են ստանում օրենքով սահմանված կարգով և հավատարմագրվում են համապատասխան ընտրական մարմնի կողմից՝ համապատասխան հրավերի առկայության դեպքում: Հրավերները կարող են ուղարկվել օրենքով լիազորված մարմինների կողմից ընտրությունների նշանակման մասին որոշման պաշտոնական հրապարակումից հետո:

Ըստ նույն հոդվածի՝ միջազգային դիտորդներն իրավունք ունեն՝

ա) ստանալ ընտրական գործընթացը կարգավորող բոլոր փաստաթղթերը (ազգային անվտանգության շահերին չառնչվող), ընտրական մարմիններից անհրաժեշտ տեղեկատվություն և ազգային օրենքներում նշված ընտրական փաստաթղթերի պատճենները.

բ) շփվել քաղաքական կուսակցությունների, դաշինքների, թեկնածուների, մասնավոր անձանց, ընտրական մարմինների աշխատակիցների հետ.

գ) ազատ այցելել բոլոր ընտրական տեղամասերը և քվեարկության համար նախատեսված տարածքները, այդ թվում՝ քվեարկության անցկացման օրը.

դ) հետևել քվեարկության ընթացքին, ձայների հաշվարկմանը և դրանց արդյունքների ամփոփմանը քվեաթերթիկների հաշվարկման ընթացակարգի տեսանելիությունն ապահովող պայմաններում.

ե) ծանոթանալ ընտրությունների մասին օրենսդրության խախտման հետ կապված բողոքների (դիմումների) և գանգատների քննարկման արդյունքներին.

զ) առանց միջամտելու ընտրություններն իրականացնող մարմնի աշխատանքներին՝ տեղեկացնել ընտրական մարմինների ներկայացուցիչներին իրենց դիտարկումների, առաջարկությունների մասին.

է) քվեարկության ավարտից հետո հրապարակայնորեն շարադրել իրենց կարծիքը ընտրությունների նախապատրաստման և անցկացման մասին.

ը) ընտրությունների կազմակերպիչներին, պետական իշխանության մարմիններին և համապատասխան պաշտոնատար անձանց ներկայացնել ընտրությունների ընթացքի

դիտարկման արդյունքների վերաբերյալ իրենց եզրակացությունը:

ԵԱՀԽ-ի մարդկային չափանիշի խորհրդածոլովի Կոպենհագենի խորհրդակցության փաստաթղթի (1990)⁴ 8-րդ պարագրաֆում մասնակից պետությունների կարծիքով ինչպես միջազգային, այնպես էլ ազգային դիտորդների ներկայությունը կարող է բարձրացնել ընտրական գործընթացի հեղինակությունը այն պետությունների համար, որոնցում անցկացվում են ընտրությունները: Ուստի նրանք դիտորդներ են հրավիրում ԵԱՀԽ-ի ցանկացած այլ մասնակից պետություններից և ցանկացած համապատասխան մասնավոր հիմնարկներից ու կազմակերպություններից, որոնք կցանկանան դա, դիտարկելու իրենց ազգային ընտրությունների ընթացքն այն ծավալով, որ թույլատրվում է օրենքով: Նրանք նաև կձգտեն օժանդակել նույնպիսի ներկայությանը համազգայինից ցածր մակարդակով անցկացվող ընտրական գործընթացին: Նման դիտորդները պարտավորություն կստանձնեն չմիջամտել ընտրական գործընթացին:

Համաձայն նույն փաստաթղթի 10.4. պարագրաֆի՝ մասնակից պետությունները հայտարարում են, որ իրենք պարտավոր են նման խմբերի ու կազմակերպությունների անդամներին թույլ տալ անարգել մուտք ունենալու և կապ պահպանելու նման մարմինների հետ՝ իրենց երկրներում և նրա սահմաններից դուրս, և միջազգային կազմակերպությունների հետ, կարծիքներ փոխանակելու, շփումներ պահպանելու և համագործակցելու նման խմբերի ու կազմակերպությունների հետ և մարդու իրավունքների ու հիմնարար ազատությո-

⁴ <http://www.osce.org/ru/odihr/elections/14304?download=true>

յունների խրախուսման և պաշտպանության նպատակով կամավոր ֆինանսական մուծումներ խնդրելու, ստանալու և օգտվելու ազգային ու միջազգային աղբյուրներից:

Կոպենհագենի փաստադրթի 12 պարագրաֆի համաձայն՝ մասնակից պետությունները, ցանկանալով ապահովել առավել մեծ բացահայտություն Վիեննայի Ամփոփիչ փաստաթղթի ԵԱՀԽ-ի մարդկային չափանիշին վերաբերող բաժնում ստանձնած պարտավորությունների կատարման գործում, որոշում են որպես վստահությունն ամրապնդող միջոցներ ընդունել մասնակից պետությունների կողմից ուղարկվող դիտորդների և ոչ կառավարական կազմակերպությունների ներկայացուցիչների և այլ շահագրգիռ անձանց ներկայությունը դատավարություններում, ինչպես դա նախատեսված է ազգային օրենսդրությամբ և միջազգային իրավունքով. ընդամին ըմբռնվում է, որ դատավարությունները կարող են դռնփակ (in camera) լինել միայն օրենքով նախանշված և միջազգային պարտավորություններին համապատասխանող հանգամանքների առկայության դեպքում:

Ընտրական գործընթացի նկատմամբ միջազգային դիտորդների կողմից հսկողության իրականացման կանոնների ժողովածուի (Նյու Յորք, 2005թ. հոկտեմբերի 27)⁵ համաձայն՝ միջազգային դիտորդները ընտրությունների նկատմամբ հսկողություն իրականացնելիս՝ պարտավոր են հարգել ամրագրված միջազգային իրավունքի նորմերը մարդու իրավունքների ոլորտում, հարգել ներպետական օրենսդրությունը և պետական մարմինների լիազորությունները ընտրությունների ընթացքում, հարգել միազգային դիտորդական ա-

⁵ <http://www.osce.org/ru/odihr/elections/70289?download=true>

ռաքելության կազմակերպական միասնությունը, պահպանել քաղաքական չեզոքությունը, չխոչընդոտել ընտրական գործընթացի անցկացմանը, ապահովել օբյեկտիվ և բազմակողմանի մշտադիտարկում, եզրակացություններ կազմելիս՝ ցուցաբերել արհեստավարժություն, չհրապարակել կարծիք ընտրությունների օրինականության վերաբերյալ՝ մինչև համապատասխան պաշտոնական զեկույց հրապարակելը:

Մինևույն ժամանակ պետք է նկատի ունենալ, որ ինչպես միջազգային, այնպես էլ ներպետական մակարդակով դիտորդների ներկայությունը դեռևս չի ապահովում ընտրությունների օրինականությունը, լեգիտիմությունը:

ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների բյուրոն իր կողմից մշակած ընտրությունների դիտարկման ուղեցույցով (Վարշավա, 1997թ.) հստակ հայտնել է, որ բյուրոն համաձայն չէ այն տեսակետի հետ, որ դիտորդի ներկայությունը ապահովում է ընտրական գործընթացի օրինականությունը: Ընտրությունների վերաբերյալ օբյեկտիվ և հիմնարար կարծիք կարող է ձևավորվել բացառապես բազմակողմանի դիտարկման և համապատասխան եզրահանգումների (եզրակացություններ, զեկույց) հիման վրա:

Վերոհիշյալ ուղեցույցի համաձայն՝ դիտորդները գնահատում են ընտրական գործընթացի համապատասխանությունը միջազգային հիմնական սկզբունքներին: Դրանք են՝ ընտրությունների պարբերականությունը, ազատությունը, արդարությունը, ընտրական իրավունքի հավասարությունն ու համընդհանրությունը, հրապարակայնությունը, գաղտնի քվեարկությունը: Յուրաքանչյուր պետություն կրում է պա-

տասխանատվություն այդ միաջազգային սկզբունքների պահպանման համար:

Դիտորդները գնահատում են նաև անցկացված ընտրությունների համապատասխանությունը ներպետական օրենսդրությանը: Անցակցված ընտրությունների գնահատման ժամանակ ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների բյուրոն խորհորդ է տալիս նաև համեմատել անցկացված ընտրությունները նախկին ընտրությունների հետ: Անցկացված ընտրությունների վերաբերյալ եզրակացություններ, զեկույցներ կազմելու համար ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների բյուրոն խորհուրդ է տալիս դիտորդներին.

1. Վերլուծել և գնահատել ներպետական ընտրական օրենսդրությունը:

2. Գնահատել ընտրողների գրանցման գործընթացը, ուսումնասիրել ընտրացուցակները կազմելու կարգը:

3. Գնահատել ընտրական գործընթացի վերաբերյալ տեղեկատվության տարածման ծավալները:

4. Գնահատել ընտրատարածքների և ընտրական տեղամասերի սահմանների որոշման կարգը:

5. Գնահատել ընտրական հանձնաժողովների գործունեությունը:

6. Վերլուծել թեկնածուների գրանցման ընթացակարգը:

7. Գնահատել ՋԼՄ-ների դերը ընտրական գործընթացում:

8. Իրականացնել հսկողություն քվեարկության, ձայների հաշվարկման և արդյունքների ամփոփման նկատմամբ:

9. Ստացված տեղեկությունների հիման վրա իրականացնել ընտրությունների արդյունքների ինքնուրույն ամփոփում:

Դիտորդների աշխատանքը ընտրական գործընթացում ավարտվում է համապատասխան եզրակացություն (զեկույց) կազմելով:

Համաձայն ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների բյուրոն իր կողմից մշակած ընտրությունների դիտարկման ուղեցույցի՝ դիտորդների եզրակացությունները պետք է պարունակեն տեղեկատվություն հետևյալ հարցերի վերաբերյալ.

1. Ընդհանուր քաղաքական իրավիճակ:
2. Ընտրությունների կազմակերպման մակարդակ:
3. Ընտրական վեճեր:
4. Ընտրողների տեղեկացվածություն:
5. Նախընտրական քարոզչություն:
6. ԶԼՄ-ների դերը ընտրական գործընթացում:
7. Ճնշում ընտրողների նկատմամբ:
8. Կանանց և ազգային փոքրամասնությունների մասնակցությունը ընտրություններին:

Այսպիսով, իրականացնելով իրենց գործառնությունները՝ դիտորդները բացահայտում և վերլուծում են ընտրությունների ընթացքում առավել հաճախ հանդիպող խախտումները, ինչը հնարավորություն է ստեղծում կատարելագործել ընտրական գործընթացը: Իրենց հերթին հրապարակված զեկույցները նպաստում են ներպետական օրենսդրական բարեփոխումների:

Լիլիա Հակոբյան
*ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի
աշխատակազմի իրավաբանական վարչության պետ,
իրավ. գիտ. թեկնածու*

**ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ
ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ**

Դիտորդական առաքելության իրավունքը եվ հավատարմագրումը:

Ընտրությունների միջազգային դիտորդության սկզբունքների ՄԱԿ-ի հռչակագիրը և Ընտրությունների դիտարկման միջազգային դիտորդների վարքագծի կանոնները (Նյու Յորք, 2005) ամրագրում են.

«Ընտրությունների միջազգային դիտորդությունը լայն ճանաչում է ստացել ողջ աշխարհում և կարևոր դեր է խաղում ընտրական գործընթացների բնույթի հստակ և անաչառ գնահատման ապա հովման հարցում: Ընտրությունների մանրակրկիտ և անկողմնակալ դիտարկումը պահանջում է վստահելի մեթոդաբանության առկայություն և համագործակցություն՝ այլոց հետ մեկտեղ, իշխանության ազգային մարմինների, քաղաքական պայքարի ազգային մասնակիցների (քաղաքական կուսակցությունների, թեկնածուների և հանրաքվեի դրված հարցերի կողմնակիցների), ընտրությունները դիտարկող ազգային կազմակերպությունների և վստահություն ներշնչող միջազգային այլ կազմակերպությունների հետ»:

Դիտորդական առաքելության իրականացումը չափազանց կարևորվում է ՀՀ ընտրական գործընթացներում: Հետադարձ հայացք սփռելով անցած տարիներին ընտրական գործընթացներում դիտորդական առաքելություն իրականացնողների սուբյեկտային և քանակական կազմի վրա, կարելի է փաստել, որ Հայաստանի Հանրապետությունում ընտրական և հանրաքվեի գործընթացների նկատմամբ մեծ է ոչ միայն տեղական, այլ նաև միջազգային դիտորդների հետաքրքրությունը:

Հայաստանի Հանրապետությունում ընտրական և հանրաքվեի գործընթացների շրջանակներում դիտորդական առաքելության իրավունքը, հավատարմագրման կարգը, դիտորդների իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև նրանց գործունեության երաշխիքները սահմանված են ՀՀ ընտրական օրենսգիրք սահմանադրական օրենքով և Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նորմատիվ իրավական ակտերով:

Ընտրությունների ժամանակ *դիտորդական առաքելության* իրավունք ունեն՝

1) միջազգային կազմակերպությունները և օտարերկրյա այն հասարակական կազմակերպությունները, որոնց կանոնադրական նպատակները ներառում են ժողովրդավարության և մարդու իրավունքների պաշտպանության հարցեր.

2) Հայաստանի Հանրապետության այն հասարակական կազմակերպությունները, որոնց կանոնադրական նպատակներն ընտրությունները նշանակելու օրվան նախորդող նվազագույնը մեկ տարի ներառում են ժողովրդավարության և մարդու իրավունքների պաշտպանության հարցեր, և որոնք

չեն աջակցում թեկնածուներին կամ ընտրություններին մասնակցող կուսակցություններին:

Միաժամանակ Ընտրական օրենսգիրքը սահմանում է, որ ընտրությունների ժամանակ հրավերի առկայության դեպքում ընտրական գործընթացի **դիտարկում՝ այցելուի կարգավիճակով** կարող են իրականացնել.

1. Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչությունների ներկայացուցիչները՝ (հրավերն ուղարկում է Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը),

2. այլ պետությունների ընտրական մարմինների ներկայացուցիչները (հրավերն ուղարկում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահը):

Ներկայացնելով անցած 5 տարիների ընթացքում դիտորդական առաքելության իրականացումը Հայաստանի Հանրապետության համապետական ընտրությունների և հանրաքվեի շրջանակներում, ստանում ենք հետևյալ պատկերը⁶.

Միջազգային կազմակերպությունները և օտարերկրյա հասարակական կազմակերպությունները դիտորդական առաքելություն կարող են իրականացնել միայն հրավերի առկայության դեպքում: Հրավեր ուղարկելու իրավունք ունեն՝

- 1) Հանրապետության նախագահը.
- 2) Ազգային ժողովի նախագահը.
- 3) վարչապետը.
- 4) Կենտրոնական ընտրական հանձնաժողովը:

⁶ Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի պաշտոնական կայք՝ www.elections.am:

	Միջազգային կազմակերպություններ	Միջազգային դիտարկների քանակ	ՀՀ-ում հավաստագրված դեպատմությունների ներկայացուցիչներ	Օտարերկրյա ընտրված մարմինների ներկայացուցիչներ	Տեղական կազմակերպություններ	Տեղական դիտարկների քանակ
ԱՄՆ ընտրություններ, 2012	1. ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ 2. ԵՆՆՕԿ 3. ԱՊՈՀ ՄԻՌԿ 4. ԱՊՈՀ դիտարկական առաքելություն 5. Այ Էֆ Ի Էս 6. Այ Սի Ի Էս 7. Եվրոպական խորհրդարան 8. ԵԱՀԿ Խորհրդարանական վեհաժողով	647	35	24	Թվով 54 ՀԿ-ներ	31451
ՀՀ Նախագահի ընտրություններ, 2013	1. ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ 2. ԵՆՆՕԿ 3. Այ Սի Ի Էս 4. ԱՊՈՀ ՄԻՌԿ 5. ԱՊՈՀ դիտարկական առաքելություն 6. ԵԱՀԿ Խորհրդարանական վեհաժողով 7. Եվրոպական խորհրդարան 8. Այ Էֆ Ի Էս 9. ԵԱՀԿ – Երևանյան գրասենյակ 10. ԵՆՆ – Երևանյան գրասենյակ	632	34	25	Թվով 26 ՀԿ-ներ	6251
Սահմանադրական հանրաքվե, 2015	1. ԱՊՈՀ դիտարկական առաքելություն 2. ԱՊՈՀ ՄԻՌԿ 3. ԵՆՆՕԿ 4. ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ	123	7	33	Թվով 18 ՀԿ-ներ	3006
ԱՄՆ ընտրություններ, 2017¹	1. ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ	292	–	–	Թվով 25 ՀԿ-ներ	12763

¹ Տվյալներ առ 16.02.2017թ., որոնք վերջնական չեն, քանի որ քառ ՀՀ ԿԸՀ 30.12.2016թ. N 155-Ս որոշմամբ սահմանված «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2017 թվականի ապրիլի 2-ին կայանալիք ինքնակազմակերպության ընտրությունների կազմակերպության և անցկացման եղանակի վերջնական միջոցառումների ժամանակացույց»-ով դիտարկների և այցելությունների հավաստագրման վերջնամակետ է 2017 թվականի մարտի 18-ը:

Միջազգային կազմակերպությունների, օտարերկրյա հասարակական կազմակերպությունների դիտորդական առաքելությունների կազմում որպես դիտորդ Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ ընդգրկվել չեն կարող:

Ինչ վերաբերում է տեղական դիտորդներին, ապա ՀՀ հասարակական կազմակերպությունները կարող են իրականացնել դիտորդական առաքելություն, եթե նրանց կանոնադրական նպատակներն ընտրությունները նշանակելու օրվան նախորդող նվազագույնը մեկ տարի ներառում են ժողովրդավարության և մարդու իրավունքների պաշտպանության հարցեր, և որոնք չեն աջակցում թեկնածուներին կամ ընտրություններին մասնակցող կուսակցություններին: Նշված պահանջի կապակցությամբ իր երկրորդ և վերջնական համատեղ զեկույցում Վենետիկի հանձնաժողովն ու ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակը (ԺՀՄԻԳ) զեկույցի 18-րդ կետում նշել են, որ ի կատարումն նախորդ զեկույցում արված նկատառումների, Ընտրական օրենսգրքում փորձառության պահանջը մեղմացվել է՝ 3 տարուց կրճատվելով մինչև 1 տարի¹:

Դիտորդներն իրենց առաքելությունն իրականացնում են Կենտրոնական ընտրական հանձնաժողովում հավատարմագրվելուց հետո:

Դիտորդների հավատարմագրման կարգը, հավատարմագրման համար անհրաժեշտ փաստաթղթերի և տեղեկությունների ցանկը, հավատարմագրման համար ներկայացվող

¹ Stu` Council of Europe's European Commission for Democracy through Law (Venice Commission) and the Organization for Security and Co-operation in Europe's Office for Democratic Institutions and Human Rights (OSCE/ODIHR), SECOND JOINT OPINION ON THE ELECTORAL CODE (AS AMENDED ON 30 JUNE 2016), Strasbourg, Warsaw, 17 October 2016, CDL-AD(2016)031.

դիտորդների ցուցակի էլեկտրոնային ձևը, ներկայացման կարգը, դիտորդների և այցելուների վկայականների ձևերը և դրանց լրացման կարգը սահմանված են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2016թ. նոյեմբերի 9-ի թիվ 119-Ն որոշմամբ:

Հավատարմագրվելու, ինչպես նաև հավատարմագրված դիտորդների ցանկում փոփոխություններ (լրացումներ) կատարելու համար դիմումները Կենտրոնական ընտրական հանձնաժողով են ներկայացվում ընտրությունները նշանակելու օրվանից հետո, բայց քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 15 օր առաջ:

Հավատարմագրվելու դիմումը պետք է պարունակի դիմողի անվանումը, ծանուցման հասցեն, հեռախոսահամարը, նշում՝ կազմակերպության դիտորդների վարքագծի կանոնների ընդունման և ուսուցման, ինչպես նաև ընտրության անվանման և օրվա մասին, կից ներկայացվող փաստաթղթերի ցանկը, դիմումի տրման ամսաթիվը, դիմողի ստորագրությունը:

Հավատարմագրման դիմումին կից ներկայացվում է.

1) հասարակական կազմակերպության կանոնադրության պատճենը՝ Հայաստանի Հանրապետությունում գրանցված հասարակական կազմակերպությունների դեպքում,

2) հրավերի պատճենը՝ միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա հասարակական կազմակերպությունների դեպքում,

3) հավատարմագրման ներկայացվող դիտորդների ցուցակը, որը ներկայացվում է թղթային և էլեկտրոնային տարբերակներով¹:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպություններ

¹ Ցուցակի էլեկտրոնային տարբերակն ու լրացման կարգը կարող է ներբեռնվել ՀՀ ԿՐՀ պաշտոնական կայքից՝ www.elections.am:

րին համապատասխան վկայականներ է տրամադրում դիմումը ստանալուց հետո՝ 12 օրվա ընթացքում: Միջազգային դիտորդներին տրամադրվում են հայերեն և անգլերեն կամ հայերեն և ռուսերեն լեզուներով լրացված վկայականներ: Տեղական դիտորդների դեպքում համապատասխան կազմակերպությանը տրվում է ներկայացված ցուցակում ընդգրկված դիտորդների թվին համապատասխան քանակի վկայականներ, որոնցում լրացվում է համապատասխան կազմակերպության անվանումը, իսկ դիտորդի ազգանունը, անունը, հայրանունը լրացվում է համապատասխան կազմակերպության կողմից և տրամադրվում է դիտորդին: Վկայականը կարող է կնքվել դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպության կնիքով:

Դիտորդները համարվում են հավատարմագրված Կենտրոնական ընտրական հանձնաժողովում հավատարմագրվելու մասին գրությունը և վկայականները համապատասխան կազմակերպությանը տրամադրելուց հետո՝ հավատարմագրված դիտորդների վերաբերյալ տեղեկատվությունը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում տեղադրելու պահից: Նշված տեղեկատվությունը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում տեղադրվում է մինչև հավատարմագրվելու մասին գրության ուղարկման օրվան հաջորդող օրվա ավարտը:

Դիտորդների լիազորությունները դադարում են ընտրությունների արդյունքների պաշտոնական հրապարակումից հետո՝ 8-րդ օրը, եթե ընտրության արդյունքները դատարան չեն բողոքարկվել: Ընտրությունների արդյունքները դատարան բողոքարկելու դեպքում դիտորդների լիազորություններն ավարտվում են դատական ակտի հրապարակման օրվա հաջորդ օրը, եթե ընտրության երկրորդ փուլ կամ վերաքվեարկություն չի նշանակվել: Ազգային ժողովի ընտրության երկրորդ փուլի և վերաքվեարկության դեպքում դիտորդ-

ների կրկին հավատարմագրում չի պահանջվում:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը մերժում է դիտորդների հավատարմագրման մասին դիմումը Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված հիմքերի առկայության պայմաններում: Այսպես, ՀՀ ընտրական օրենսգրքի 31-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը չի հավատարմագրում դիտորդներին, եթե.

1) միջազգային և օտարերկրյա հասարակական կազմակերպությունների դեպքում՝

ա/ առկա չէ հրավեր,

բ/ հավատարմագրվելու դիմումը ներկայացվել է Ընտրական օրենսգրքով սահմանված ժամկետների խախտմամբ,

գ/ ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2016թ. նոյեմբերի 9-ի թիվ 119-Ն որոշման պահանջներին.

2) տեղական կազմակերպությունների դեպքում՝

ա/ կանոնադրական նպատակներն ընտրությունները նշանակելու օրվան նախորդող նվազագույնը մեկ տարի չեն ներառում ժողովրդավարության և մարդու իրավունքների պաշտպանության հարցեր,

բ/ աջակցում են թեկնածուներին կամ ընտրություններին մասնակցող կուսակցություններին,

գ/ հավատարմագրվելու դիմումը ներկայացվել է Ընտրական օրենսգրքով սահմանված ժամկետների խախտմամբ,

դ/ դիմումը չի պարունակում նշում՝ կազմակերպության դիտորդների վարքագծի կանոնների ընդունման մասին,

ե/ դիմումը չի պարունակում նշում՝ կազմակերպության դիտորդների ուսուցման մասին,

զ/ ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2016թ. նոյեմբերի 9-ի թիվ 119-Ն որոշման պահանջներին:

Տեղական դիտորդներին վերաբերող վերը նշված կանոնները տարբերվում են նախկինում առկա կարգավորումներից: Խոսքը մասնավորապես, վերաբերում է դիմումում կազմակերպության դիտորդների վարքագծի կանոնների ընդունման և դիտորդների ուսուցման մասին նշում ներառելու պահանջին: Նշված պահանջն առաջին անգամ է տեղ գտել ՀՀ ընտրական օրենսգրքում: Անշուշտ, նշված սահմանափակումները տրամաբանական են և համապատասխանում են ընտրությունների դիտորդության միջազգային չափանիշներին, և դրանց ամրագրումը նոր Ընտրական օրենսգրքում պայմանավորված է այն հանգամանքով, որ օրենսգիրքն ընդունելիս քաղաքական ուժերի և քաղաքացիական հասարակության միջև ձեռքբերված համաձայնություններին համապատասխան՝ նոր Ընտրական օրենսգրքում տեղ չգտան դիտորդների ուսուցմանը վերաբերող 2011 թվականի Ընտրական օրենսգրքով ամրագրված կանոնակարգումները: Նախկինում 2011 թվականի ՀՀ ընտրական օրենսգրքի իրավակարգավորումների շրջանակներում, դիտորդների ուսուցմամբ զբաղվում էին հենց ընտրական մարմինները, ավելի հստակ՝ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը: Այսպես, 2011 թվականի մայիսի 26-ի ՀՀ ընտրական օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ պարբերության համաձայն. Ոչայաստանի Հանրապետությունում գրանցված հասարակական կազմակերպությունների դիտորդները ընտրական հանձնաժողովների նիստերին, իսկ քվեարկության ընթացքում նաև քվեարկության սենյակում կարող են ներկա լինել, եթե ունեն ընտրական հանձնաժողովում ընդգրկվելու որակավորման վկայական կամ ստուգարքի արդյունքով ստացել են դիտորդական առաքելություն իրականացնելու վկայական: Դասընթացները կազմակերպվում են Երևան քաղաքում և մարզերում (մարզերում՝ ըստ ընտրատարածքների) տարին առնվազն մեկ անգամ՝ քաղաքացիների դիմումների և

հասարակական կազմակերպությունների ներկայացրած ցուցակների հիման վրա: Որակավորման վկայականները տրվում են ստուգարքի հիման վրա:Ս: Նման իրավակարգավորմամբ ապահովվում էր, որպեսզի դիտորդական առաքելություն իրականացնող անձն իրազեկված լինի ընտրական գործընթացների մասին, հնարավորություն ունենան օրենքին և այլ նորմատիվ իրավական ակտերին համապատասխան գնահատել տեղի ունեցածը՝ որակելով այն որպես խախտում կամ օրենքի տառին համահունչ ձեռնարկված միջոց և այլն: Վերոգրյալը համահունչ էր նաև ՀՀ կողմից վավերացված միջազգային փաստաթղթերով ստանձնած պարտավորությունների: Մասնավորապես, ՌԱՆԿԱԽ Պետությունների Համագործակցության մասնակից պետություններում ժողովրդավարական ընտրությունների, ընտրական իրավունքների և ազատությունների չափանիշների մասին՝ 2002 թվականի Կոնվենցիայի¹ 14-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված է. «Ընտրական մարմինները և (կամ) այլ մարմիններն ու կազմակերպությունները կարող են օժտվել ազգային դիտորդների և ընտրությունների մյուս մասնակիցների համար ժողովրդավարական ընտրական տեխնոլոգիաների հիմունքների, ազգային ընտրական օրենսդրության, միջազգային ընտրական չափանիշների, մարդու և քաղաքացու ընտրական իրավունքների և ազատությունների ապահովման և պաշտպանության վերաբերյալ ուսուցում կազմակերպելու լիազորություններով»:

Նշված իրավակարգավորումների փոխարեն նոր Ընտրական օրենսգիրքը նախատեսել է, որ այն հասարակական կազմակերպությունները, որոնք ցանկանում են ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելություն իրականացնել, պարտավոր են ինքնուրույն կազմակերպել իրենց

¹ Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2005 թվականին:

դիտորդների ուսուցումը և ընդունել դիտորդների վարքագծի կանոններ: Ցավոք, նշված իրավակարգավորում սահմանելու հետ մեկտեղ, նշված պահանջների իրական պահպանման նկատմամբ վերահսկողության որևէ կառուցակարգ ՀՀ ընտրական օրենսգրքով չի առաջարկվել, և դիտորդներ հավատարմագրելիս Կենտրոնական ընտրական հանձնաժողովը, հավաստիության կանխավարկածից ելնելով, սոսկ դիմումում դիտորդների վարքագծի կանոնների ընդունման և ուսուցման անցկացման մասին գրառման առկայությունն է գնահատում՝ դիմումը որպես օրենքի պահանջներին համապատասխան ներկայացված որակելու համար:

Նշված նոր կարգավորումների առկայությունն ամենևին չի ազատում Կենտրոնական ընտրական հանձնաժողովին, ի թիվս ընտրական գործընթացի այլ մասնակիցների, նաև դիտորդների իրազեկվածությունն ապահովելու պարտավորությունից: Այսպես, ՀՀ ընտրական օրենսգրքի 51-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետի համաձայն՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը մշակում և հրապարակում է ուսումնական նյութեր՝ ընտրական հանձնաժողովների անդամների, մասնագետների, թեկնածուների, վստահված անձանց, դիտորդների և ընտրողների համար, ինչը որպես նոր Ընտրական օրենսգրքի ձեռքբերում մատնանշվել է արդեն իսկ հիշատակված Վենետիկի հանձնաժողովի և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի համատեղ զեկույցում¹:

Անդրադառնալով համապետական ընտրությունների և հանրաքվեների ժամանակ վերջին 5 տարիների ընթացքում հավատարմագրման մասին դիմումների մերժման Կենտրոնական ընտրական հանձնաժողովի պրակտիկային, ստացվում է հետևյալ պատկերը².

¹ Տես՝ նույն տեղում, կետ 18:

² Աղբյուրը՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի պաշտոնական կայքը՝ www.elections.am:

ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԸ	ՄԵՐՇՈՒՄՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ	ՀԱՄԱՐՆԱԿԱԿԱՆ ԿԱՑՄԱԿԵՊՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԿԸՀ ՈՐՈՇՈՒՄԸ
Աժ ընտրություններ, 2012	10	«ԲԱՅՐԱՄԱՅՈՒՆ» ՄՈՅԻՄԱՍԿԱԿԱՆ ԲԱՆԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԿ	21.03.2012թ. N 61-Ա
		«ԹՈՓ ՄԵՆԵՋՄԵՆՏ» ԿՐԹԱԽՈՐՀԴԻԱՏՎԱԿԱՆ ՀԿ	21.03.2012թ. N 62-Ա
		«ՏԱԿԱՆԴԱՎՈՐ ՄԵՐՈՒՆԻ» ՄԱՆԿԱՂԱՍՏԱՆԵՑԱԿԱՆ ԵՐԿՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԿ	29.03.2012թ. N 75-Ա
		«ԱԶԱՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԺՈՂՈՎՐԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ» ՀԿ	29.03.2012թ. N 76-Ա
10	«ՄԱՐԻ և ԻՐԱՎՈՒՆՔ» ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ՀԿ	3.04.2012թ. N 98-Ա	
	«ՄԵՂՈՒՐ ԿԱՆԱՆՅ ՌԵՍՈՒՐՍ ԿԵՆՏՐՈՆ» ՀԿ	3.04.2012թ. N 99-Ա	
	«ԵՔՊԱ» ԵՐԿՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԿ	3.04.2012թ. N 100-Ա	
	«ԿԱՂՆԻ» ՄՈՅԻՄԱՍԿԱԿԱՆ-ԲԱՄՊԱՆՉՊԱՆԱԿԱՆ ՀԿ	10.04.2012թ. N 117-Ա	
0	«ՄԱՆՏՈՒՆՈՒ ԿԱՆԱՆՅ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԻ» ՀԿ	10.04.2012թ. N 118-Ա	
	«ԻՐԱՎԱՔԱՆՆԵՐԻ և ՀՈԳԵՔԱՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՍՈՑԻԱՅԻՆ» ՀԿ	28.04.2012թ. N 212-Ա	
	-----	-----	
	«ԼՈԳՈՍ» ԵՐԿՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԿ	26.11.2015թ. N 81-Ա	
3	«ՔԱՂԱՔԱՅԻՆԱԿԱՆ ՇՏԱՔ» ՔԱՂԱՔԱՅԻՆ-ԻՐԱՎԱԿԱՆ ՀԿ	29.10.2015թ. N 68-Ա	
	«ԼՈՒՆՑԻՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄ» ԲԱՆԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԿ	19.11.2015թ. N 75-Ա	
1	«ՔԱՂԱՔԱՅԻՆԱԿԱՆ ՇՏԱՔ» ՔԱՂԱՔԱՅԻՆ-ԻՐԱՎԱԿԱՆ	22.02.2017թ. N 39-Ա	

¹ Տվյալներն առ 24.02.2017թ., որոնք վերջնական չեն, քանի որ քստ ՀՀ ԿԸՀ 30.12.2016թ. N 155-Ս որոշմամբ սահմանված «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2017 թվականի սեպտեմբերի 2-ին կայացրած հերթական ընտրությունների արդյունքների արձանագրության և սեպտեմբերի 2-ին կայացրած հերթական վիճակագրության և սեպտեմբերի 2-ին կայացրած հերթական վիճակագրության մասնակցություն»-ով դիտարկների և արդյունքների հավաստագրման վերջնական վերջնական 18-ը:

Դիտորդի իրավունքները, պարտականությունները եւ գործունեության երաշխիքները:

Բազմաթիվ միջազգային փաստաթղթեր տարբեր ձևաչափերով անդրադարձել են դիտորդների իրավական կարգավիճակին և նրանց գործունեության երաշխիքներին: Չփորձելով, բնավ, ամբողջությամբ ներկայացնելու ընտրությունների ժամանակ դիտորդությանն առնչվող միջազգային իրավունքի ողջ իրավակարգավորումը, անդրադառնանք որոշ միջազգային փաստաթղթերին: Մասնավորապես, Վենետիկի հանձնաժողովի 2002 թվականի «Ընտրական հարցերում բարենպաստ գործունեության կանոնագրքի»¹ 3.2.-րդ կետում նշված է.

«ա/ Եվ տեղական, և միջազգային դիտորդներին պետք է տրամադրվեն ամենալայն հնարավորություններն ընտրությունների դիտորդական գործընթացում մասնակցելու համար:

բ/ Դիտորդությունը չպետք է սահմանափակվի միայն քվեարկության օրով, այլ պետք է ներառի թեկնածուների գրանցման ժամանակաշրջանը և անհրաժեշտության դեպքում ընտրողների գրանցման ժամանակաշրջանը, ինչպես նաև ընտրարշավը: Պետք է հնարավոր լինի որոշել, թե արդյոք խախտումները տեղի են ունեցել ընտրություններից առաջ, ընտրությունների ընթացքում, թե ընտրություններից հետո: Այն միշտ հնարավոր պետք է լինի ձայների հաշվարկման ընթացքում:

¹ Նշված Կանոնագրքը՝ ցուցումներով և բացատրական զեկույցով, ընդունվել է Վենետիկի հանձնաժողովի կողմից 52-րդ լիազգումար նստաշրջանի ընթացքում (Վենետիկ, 2002թ. հոկտեմբերի 18-19), CDL-AD (2002) 23 rev

զ/ Այն տեղերը, որտեղ դիտորդներն իրավունք չունեն ներկա գտնվել, պետք է հստակորեն սահմանված լինեն օրենքով:

դ/ Դիտորդությունը պետք է անդրադառնա նաև իշխանությունների չեզոքություն դրսևորելու պարտականության պահպանմանը:»:

Նշված Կանոնագրքի «Ցուցումներ և բացատրական գեկույց»-ի «Ընտրությունների դիտարկումը» վերտառությամբ 3.2-րդ կետում սահմանվում է.

«86. Ընտրությունների դիտարկումը կարևոր դեր է խաղում, քանի որ վկայություն է ապահովում այն մասին, թե արդյոք ընտրական գործընթացը կանոնավոր էր, թե ոչ:

87. Կան դիտորդների երեք տիպեր՝ որևէ կուսակցության համակիր ազգային դիտորդներ, անկուսակցական չեզոք ազգային դիտորդներ և միջազգային (անկուսակցական) դիտորդներ: Գործնականում առաջին երկու կատեգորիաների միջև տարբերակումը միշտ չէ, որ պարզ է: Ահա թե ինչու լավագույն տարբերակը կլինի դիտորդական ընթացակարգը դարձնել հնարավորին չափ ընդգրկուն թե ազգային և թե միջազգային մակարդակում:

88. Դիտարկումը չի սահմանափակվում փաստացի ընտրությունների օրով, այլ ներառում է նաև հավաստիանալը, որ որևէ խախտում տեղի չի ունեցել ընտրություններից առաջ (օրինակ, ընտրացուցակների սխալ կազմումը, թեկնածուների առջև ծառայած խոչընդոտները, խոսքի ազատության սահմանափակումները և լրատվամիջոցների մատչելիության կամ ընտրարշավների ընտրական ֆինանսավորման մատչելիության ապահովման հետ կապված խախտումները), ընտրությունների ընթացքում (օրինակ, ընտրողների վրա ճնշում գործադրելու, բազմակի քվեարկության, քվեարկութ-

յան գաղտնիության խախտման և այլնի միջոցով), կամ քվեարկությունից հետո (հատկապես ձայների հաշվարկման և արդյունքների հայտարարման ժամանակ): Դիտարկումը պետք է հատկապես բնեռվի այն հանգամանքի վրա, թե որքանով, ինչպես հարկն է, իշխանությունների վարքը չեզոք է:

89. Միջազգային դիտորդները բացառիկ կարևոր դեր են խաղում այնպիսի պետություններում, որտեղ դեռ չեն ձևավորվել ընտրությունների օրինականության անկողմնակալ վավերացման ավանդույթներ:

90. Ընդհանուր առմամբ ինչպես միջազգային, այնպես էլ ազգային դիտորդները պետք է հնարավորություն ունենան հարցազրույց անցկացնելու ներկաներից ցանկացածի հետ, գրառումներ կատարելու և իրենց կազմակերպությանը զեկուցելու, սակայն նրանք պետք է ձեռնպահ մնան մեկնաբանություններ անելուց:

91. Օրենքում պետք է հստակ սահմանված լինի, թե ինչ տարածքներ իրավունք չունեն այցելելու դիտորդները, որպեսզի նրանց գործունեությանը չխոչընդոտեն: Օրինակ, այնպիսի ակտի առկայությունը, որով դիտորդներին լիազորություն է տրվում այցելել միայն այն տարածքները, որտեղ ընտրությունները (քվեարկությունը) տեղի են ունենում, կարող է կոնկրետ ընտրական տեղամասերում անարդարացիորեն մեկնաբանվել շատ նեղ ձևով»:

Միջազգային դիտորդական առաքելության գործունեության երաշխիքներին է անդրադառնում նաև Ընտրությունների միջազգային դիտորդության սկզբունքների ՄԱԿ-ի հռչակագիրը, որի 12-րդ կետում, մասնավորապես, նշվում է.

«Որպեսզի ընտրությունների միջազգային դիտորդության առաքելությունը կարողանա արդյունավետ և բարեխիղճ վարել իր աշխատանքը, պետք է պահպանվեն որոշ հիմնա-

կան պայմաններ: Դրան համապատասխան ընտրությունների միջազգային դիտորդության առաքելությունը կարող է կազմակերպվել միայն այն պայմանով, որ երկիրը, որում անցկացվում են ընտրությունները, ձեռնարկում է հետևյալ միջոցները.

ա/ հանդես է գալիս հրավերով կամ որևէ այլ կերպ պատրաստակամություն է ցուցաբերում ընդունելու ընտրությունների դիտորդական առաքելությունները յուրաքանչյուր մասնակից կազմակերպության պահանջներին համապատասխան նախօրոք մինչ ընտրությունները, որպեսզի բավարար ժամանակ լինի բոլոր այն գործընթացների վերլուծության համար, որոնք կարևոր նշանակություն ունեն իրական ժողովրդավարական ընտրություններ կազմակերպելու համար.

բ/ երաշխավորում է ընտրությունների միջազգային դիտորդության առաքելության անխոչընդոտ մատչելիությունը ընտրությունների գործընթացի բոլոր փուլերի, այդ թվում՝ էլեկտրոնային տեխնոլոգիաների և էլեկտրոնային քվեարկության արդյունքների հաստատման ընթացակարգերի, ուսումնասիրության համար՝ չպահանջելով ընտրությունների միջազգային դիտորդության առաքելությունից կնքել համաձայնություն գաղտնիության պահպանման և տեխնիկական միջոցների և ընտրությունների գործընթացների վերաբերյալ տեղեկատվության չհրապարակման մասին, և ճանաչում է, որ ընտրությունների միջազգային դիտորդության առաքելությունները կարող են հրաժարվել հավաստելու տեխնիկական միջոցների ընդունելի լինելու հանգամանքը,

գ/ երաշխավորում է անխոչընդոտ մատչելիություն ընտրական գործընթացում մասնակցող բոլոր անձանց, այդ թվում՝

- բոլոր մակարդակներում ընտրական մարմինների պաշտոնատար անձանց՝ հիմնավորված խնդրանքի ներկայացմամբ,

- իշխանության օրենսդիր մարմինների անդամների, կառավարական ծառայողների անվտանգության մարմինների աշխատակիցների, որոնց գործունեությունն առնչվում է իրական ժողովրդավարական ընտրությունների կազմակերպմանը,

- բոլոր քաղաքական կուսակցությունների, կազմակերպությունների և անձանց, որոնք ցանկություն են հայտնել մասնակցելու քաղաքական պայքարին (ներառյալ ընտրություններին թույլատրված, չթույլատրված և մասնակցությունից հրաժարված թեկնածուների) կամ ձեռնպահ են մնացել այդ մասնակցությունից,

- ՁԼՄ-ների աշխատակիցների,

- բոլոր կազմակերպությունների և անձանց, ովքեր շահագրգռված են երկրում իրական ժողովրդավարական ընտրությունների ապահովման հարցում.

դ/ ընտրությունների միջազգային դիտորդական առաքելության բոլոր անդամներին երաշխավորում է տեղաշարժման ազատությունը երկրում.

ե/ երաշխավորում է, որ ընտրությունների միջազգային դիտորդության առաքելությունը կարող է ազատ, առանց արտաքին միջամտության, հանդես գալ հանրային հայտարարություններով և իր եզրահանգումների և հանձնարարականների վերաբերյալ գեկույցներով՝ ընտրությունների հետ կապված գործընթացների և իրադարձությունների վերաբերյալ.

զ/ երաշխավորում է, որ որևէ կառավարական մարմին, անվտանգության մարմին կամ ընտրական մարմին չի մի-

ջամտելու ընտրությունների միջազգային դիտորդության առաքելության կողմից առանձին դիտորդների և առաքելության այլ անդամների ընտրանքին և չի փորձելու սահմանափակել նրանց քանակական կազմը.

է/ երաշխավորում է լիարժեք հավատարմագրում (այսինքն՝ ընտրությունների դիտարկման համար ցանկացած վկայականի կամ փաստաթղթի տրամադրումը) երկրի ողջ տարածքում այն անձանց համար, ովքեր ընտրվել են որպես ընտրությունների միջազգային դիտորդության առաքելության դիտորդներ կամ այլ մասնակիցներ աշխատելու համար՝ պայմանով, որ առաքելությունը պահպանելու է հավատարմագրման հստակ սահմանված, հիմնավորված և ոչ խտրական պահանջները.

ը/ երաշխավորում է, որ որևէ կառավարական մարմին, անվտանգության մարմին կամ ընտրական մարմին չի միջամտելու ընտրությունների միջազգային դիտորդության առաքելության աշխատանքներին.

թ/ երաշխավորում է, որ որևէ կառավարական մարմին չի գործադրելու ճնշում, սպառնալու կիրառել միջոցներ կամ կիրառել պատժելու որևէ միջոցներ իր որևէ քաղաքացու կամ որևէ օտարերկրացու նկատմամբ, որոնք աշխատում են ընտրությունների միջազգային դիտորդության առաքելության վրա, ցուցաբերում են վերջինիս օգնություն կամ տեղեկատվություն են տրամադրում ընտրությունների դիտարկման միջազգային սկզբունքներին համապատասխան:»:

«Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետություններում ժողովրդավարական ընտրությունների, ընտրական իրավունքների և ազատությունների չափա-

նիշների մասին» 2002թ. կոնվենցիան¹ առանձին հոդվածներով է անդրադառնում ազգային և միջազգային դիտորդների կարգավիճակին: Այսպես, Կոնվենցիայի 14-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ «1. Յուրաքանչյուր թեկնածու, յուրաքանչյուր քաղաքական կուսակցություն (դաշինք), այլ հասարակական միավորում (հասարակական կազմակերպություն), ընտրողների խումբ, Սահմանադրությամբ, օրենքներում նշված՝ ընտրությունների այլ սուբյեկտներ իրավունք ունեն օրենքներով կամ ընտրությունները կազմակերպող մարմինների կողմից ընդունվող նորմատիվ ակտերով սահմանված կարգով նշանակել ազգային դիտորդներ, որոնք իրավունք ունեն քվեարկության օրը, այդ թվում՝ վաղաժամկետ քվեարկության օրը, քվեարկության համար հատկացված տարածքում իրականացնել դիտարկում: 2. Ազգային դիտորդների իրավունքներն ու պարտականությունները պետք է սահմանվեն օրենսդրությամբ:»:

Նույն Կոնվենցիայի 15-րդ հոդվածի 5-րդ, 6-րդ և 7-րդ մասերի համաձայն՝

«5. Ընդունող երկրի տարածքում միջազգային դիտորդը գտնվում է տվյալ պետության հովանավորության ներքո: Ընտրական մարմինները, պետական իշխանության մարմինները, տեղական ինքնակառավարման մարմինները պարտավոր են իրենց իրավասությունների սահմաններում նրանց ցուցաբերել անհրաժեշտ աջակցություն:

6. Միջազգային դիտորդն իր գործունեությունն իրականացնում է ինքնուրույն և անկախ: Միջազգային դիտորդի գործունեության նյութաֆինանսական ապահովվածությունը կատարվում է դիտորդին ուղարկող կողմի կամ նրա անձնական միջոցների հաշվին:

¹ Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2005թ.:

7. Միջազգային դիտորդներն իրավունք չունեն օգտագործելու իրենց կարգավիճակը ընտրարշավի ընթացքը դիտարկելու հետ առնչություն չունեցող գործունեություն իրականացնելու համար: Կողմերն իրենց իրավունք են վերապահում հավատարմագրումից զրկել այն միջազգային դիտորդներին, որոնք խախտում են օրենքները, միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքները և նորմերը:»:

ՀՀ ընտրական օրենսդրությունը մեծ հաշվով համահունչ է դիտորդությանը վերաբերող միջազգային չափորոշիչներին:

Դիտորդների իրավունքներին, պարտականություններին և գործունեության երաշխիքներին նվիրված է Ընտրական օրենսգրքի 32-րդ հոդվածը, սակայն օրենսգրքի ուսումնասիրությունը վկայում է, որ նշված հոդվածում սպառիչ ցանկ ներկայացված չէ, քանի որ Ընտրական օրենսգրքի բազմաթիվ այլ հոդվածներ նույնպես անդրադառնում են դիտորդների իրավունքներին, դրանց սահմանափակումներին, դիտորդների պարտականություններին և գործունեության երաշխիքներին:

Ընտրական օրենսգրքի ուսումնասիրությունը թույլ է տալիս առանձնացնելու դիտորդների իրավունքների հետևյալ ցանկը: Այսպիսով, դիտորդն իրավունք ունի՝

1) ***ներկա գտնվելու ընտրական հանձնաժողովի նիստերին, իսկ քվեարկության ընթացքում՝ նաև քվեարկության սենյակում:*** Ընտրական հանձնաժողովի նիստերին, իսկ քվեարկության ընթացքում՝ նաև տեղամասային կենտրոնում (քվեարկության սենյակում), կարող են ներկա լինել յուրաքանչյուր միջազգային կազմակերպությունից մինչև երկու դիտորդ՝ թարգմանչի ուղեկցությամբ, իսկ տեղական դիտորդների դեպքում՝ յուրաքանչյուր կազմակերպությունից՝ մեկ դիտորդ: Դիտորդը ընտրական հանձնաժողովի նիստերին, իսկ քվեարկության ընթացքում՝ նաև տեղամասային

կենտրոնում (քվեարկության սենյակում), կարող է ներկա լինել, եթե ունի սահմանված նմուշի վկայական: Դիտորդի վկայականն ուժի մեջ է անձը հաստատող փաստաթղթի առկայության դեպքում: Ընտրական հանձնաժողովի նիստերին դիտորդի ներկայությունը արձանագրվում է ընտրական հանձնաժողովի կողմից: Քվեարկության օրը տեղամասային կենտրոն (քվեարկության սենյակ) դիտորդի այցելության դեպքում համապատասխան գրառում է կատարվում տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում (նշվում է կազմակերպության անվանումը, դիտորդի անունը, ազգանունը և տեղամաս մուտք գործելու և տեղամասից հեռանալու ժամը):

2) ***ներկա գտնվելու կալանավորված անձանց և դատապարտյալների քվեարկության կազմակերպմանն ու անցկացմանը:*** Այս իրավունքից դիտորդները նախկինում օգտվել են փոքր-ինչ այլ ձևաչափով, քանի որ մինչև 2015 թվականի սահմանադրական փոփոխությունները քվեարկությանը մասնակցելու իրավունք վերապահվում էր կալանավորված, բայց ոչ դատապարտված անձանց: Կալանավորված անձանց և դատապարտյալների քվեարկությունը կազմակերպվում և անցկացվում է քրեակատարողական հիմնարկում կազմավորված տեղամասային կենտրոնում: Այն դիտորդները, ովքեր ցանկություն ունեն ներկա գտնվելու քրեակատարողական հիմնարկում կազմավորված տեղամասային կենտրոնում անցկացվող քվեարկությանը և (կամ) արդյունքների ամփոփման նիստին, քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 10 օր առաջ համապատասխան տարածքային ընտրական հանձնաժողով են ներկայացնում գրավոր հայտ՝ նշելով հայտատուի անունը, ազգանունը, տվյալ ընտրական գործընթացում իրենց կարգավիճակը, այն քրեակատարողական հիմնարկի

անվանումը, որում կազմավորված տեղամասային կենտրոնում ցանկանում են ներկա գտնվել: Հայտին կից ներկայացվում են դիտորդի անձը հաստատող փաստաթղթի պատճենը և նրա դիտորդի վկայականը: Տարածքային ընտրական հանձնաժողովի նախագահը քվեարկության օրվանից 5 օր առաջ քրեակատարողական հիմնարկ մուտքի իրավունք ստանալու նպատակով քրեակատարողական հիմնարկի պետին է ներկայացնում այն դիտորդների ցուցակը, ովքեր ցանկություն են հայտնել ներկա գտնվելու քրեակատարողական հիմնարկում կազմավորված տեղամասային կենտրոնում՝ քվեարկության ընթացքին հետևելու նպատակով, և արդյունքների ամփոփման նիստին: Դիտորդները քրեակատարողական հիմնարկ մուտքի և ելքի ժամանակ պարտավոր են պահպանել քրեակատարողական հիմնարկ մուտքի և ելքի սահմանված կարգը և ենթարկվել քրեակատարողական հիմնարկի վարչակազմի կողմից ներկայացվող պահանջներին:

3) ներկա գտնվելու ստացիոնար բուժում իրականացնող բժշկական հաստատությունում և ռազմաբժշկական հաստատությունում քվեարկության կազմակերպմանը: Ստացիոնար բուժման մեջ գտնվող, քվեարկության օրը տեղամասային կենտրոն ինքնուրույն ներկայանալու հնարավորություն չունեցող ընտրողների, ռազմաբժշկական հաստատությունում ստացիոնար բուժման մեջ գտնվող զինծառայող ընտրողների և ձերբակալված անձանց պահելու վայրերում ձերբակալված ընտրողների քվեարկությունը տեղամասային ընտրական հանձնաժողովը կազմակերպում է համապատասխանաբար ստացիոնար բուժում իրականացնող բժշկական հաստատությունում, ռազմաբժշկական հաստատությունում և ձերբակալված անձանց պահելու վայրում՝ շրջիկ արկղի միջոցով՝ քվեարկության օրը ժամը 8:00-ից հետո՝ այն հաշվար-

կով, որ քվեարկությունն ավարտվի մինչև ժամը 18.00-ն: Շրջիկ արկղով քվեարկության կազմակերպմանն ու անցկացմանը դիտորդները հետևում են իրենց միջոցների հաշվին:

4) Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով հետևելու քվեաթերթիկների և ինքնաստանձվող դրոշմանիշների տպագրման, փոխադրման, պահպանման և հաշվարկման գործընթացներին: Դիտորդները կարող են տպագրության ողջ ընթացքում տպագրատանը հետևել քվեաթերթիկների և ինքնաստանձվող դրոշմանիշների տպագրմանը, իրենց միջոցներով ուղեկցել քվեաթերթիկները և ինքնաստանձվող դրոշմանիշները տպագրատնից տարածքային ընտրական հանձնաժողով, քվեարկության նախորդ օրը՝ տարածքային ընտրական հանձնաժողովից տեղամասային ընտրական հանձնաժողով, իսկ քվեարկության արդյունքներն ամփոփելուց հետո՝ ընտրական փաստաթղթերը տեղամասային ընտրական հանձնաժողովից տարածքային ընտրական հանձնաժողով տեղափոխող մեքենան:

Դիտորդները կարող են քվեարկության նախորդ օրը հետևել ընտրական փաստաթղթերը և տեխնիկական սարքավորումները տեղամասային ընտրական հանձնաժողովներին հասկացնելու գործընթացին, դրանց պահպանմանը, քվեարկության օրը տեղամասային ընտրական հանձնաժողովում չմիջամտելով հանձնաժողովի աշխատանքներին, հետևել քվեարկության արդյունքներն ամփոփելու գործընթացին:

5) Ցանոթանալու Կենտրոնական ընտրական հանձնաժողովի, տարածքային ընտրական հանձնաժողովի տնօրինության տակ գտնվող ընտրական փաստաթղթերին և ինքնուրույն կատարելու քաղվածքներ, ստանալու պատճեններ այն փաստաթղթերից, որոնք տեղադրված չեն Կենտրոնական

ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում: Ընտրական օրենսգրքի մի շարք հոդվածներով որպես Կենտրոնական ընտրական հանձնաժողովի պարտավորություն սահմանված է ընտրական փաստաթղթերի, ձևաթղթերի, ձևանմուշների, ինչպես նաև իրավական ակտերի, տվյալների հրապարակում: Այս առումով ընտրական գործընթացներին առնչվող տեղեկատվությունը հիմնականում մատչելի է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի պաշտոնական կայքում՝ www.elections.am: Սակայն այն փաստաթղթերը, տեղեկությունները, որոնք գտնվում են Կենտրոնական կամ տարածքային ընտրական հանձնաժողովների օգտագործման ներքո, ազատ են դիտորդների կողմից ծանոթանալու համար: Ավելին, սույն իրավունքի խախտման համար ՀՀ քրեական օրենսգրքի 154.5-րդ հոդվածով նախատեսված է քրեական պատասխանատվություն, որով 3-ից 5 տարի ազատազրկում է նախատեսվում որպես պատիժ՝ դիտորդին ընտրական փաստաթղթերին սահմանված դեպքերում և կարգով ծանոթանալուն խոչընդոտելու համար:

6) պահանջելու և ստանալու թեկնածուների հայտարարագրերի պատճենները: Դրանք տրամադրվում են դիտորդի գրավոր դիմումի հիման վրա:

7) տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի, քարտուղարի կամ հանձնաժողովի անդամներից որևէ մեկի ներկայությամբ, ում կհանձնարարի հանձնաժողովի նախագահը, ծանոթանալու տեղամասային ընտրական հանձնաժողովի տնօրինության տակ գտնվող ընտրական փաստաթղթերին (բացառությամբ քվեարկության ընթացքում քվեարկությանը մասնակցած ընտրողների ցուցակների), դատարանի համապատասխան վճիռներին, ընտրողին տրամադրած լիազոր մարմնի համապատասխան տեղեկանքին: Չմիջամտելով ընտրական հանձնաժողովի աշխատանքներ-

րին և չխաթարելով քվեարկության ընթացքը՝ ինքնուրույն կատարելու քաղվածքներ և նշումներ ընտրական փաստաթղթերից (բացառությամբ քվեարկությանը մասնակցած ընտրողների ցուցակների, քվեարկության կտրոնների): Քվեարկության ընթացքում քվեարկությանը մասնակցած ընտրողների ցուցակներից և քվեարկության կտրոններից քաղվածքներ և նշումներ կատարելն արգելվում է: Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը քվեարկության արդյունքների ամփոփման, իսկ տարածքային ընտրական հանձնաժողովի նախագահը քվեարկության արդյունքների վերահաշվարկի գործընթացը կազմակերպում են այնպես, որ դիտորդները հնարավորություն ունենան հետևել քվեարկության կտրոնների, ինքնաստանձվող դրոշմանիշների հաշվարկման, քվեաթերթիկների վավերականության որոշման, քվեաթերթիկների տեսակավորման, քվեաթերթիկների հաշվարկման գործընթացներին: Օրենսգրքի միակ սահմանափակումն այս առումով վերաբերում է քվեարկության ընթացքում քվեարկությանը մասնակցած ընտրողների ցուցակներից և քվեարկության կտրոններից քաղվածքներ և նշումներ կատարելուն, ինչն ուղղակիորեն արգելվում է Ընտրական օրենսգրքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով և 34-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով: Մակայն, մեր գնահատմամբ, սույն դրույթները ամեննին չպետք է ընկալվեն իբրև դիտորդի (կամ որևէ այն սուբյեկտի) վերը նշված իրավունքի սահմանափակում՝ հաշվի առնելով ընտրողների ստորագրած ցուցակների հրապարակմանն ուղղված Ընտրական օրենսգրքի իրավակարգավորումները: Մասնավորապես, օրենսգրքի 73-րդ հոդվածի 3.1-րդ մասի համաձայն, ընտրողների ստորագրված ցուցակները սկանավորվում են և ներբեռնելու և ըստ ընտրական տեղամասերի որոնման հնա-

րավորությամբ տեղադրվում են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում:

Ինչ վերաբերում է կտրոնից քաղվածք կատարելու արգելքին, ապա սույն իրավակարգավորումը նույնպես գտնում ենք ողջամիտ սահմանափակում՝ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով սահմանված իրավական ռեժիմը պահպանելու առումով, քանի որ քվեարկության կտրոնի վրա հանրամատչելի համարվող ընտրողի ազգանունից, անունից, հերթական համարից բացի, տպվում է նաև անձը հաստատող փաստաթղթի համարը, որոշ դեպքերում՝ նաև ընտրողի լուսանկարը:

8) պահանջելու ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրությունից քաղվածք: Նշված քաղվածքը տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը տրամադրում է դիտորդին՝ վավերացված հանձնաժողովի նախագահի և քարտուղարի ստորագրություններով և հանձնաժողովի կնիքով: Կրկին հիշատակելով ՀՀ քրեական օրենսգրքի 154.5-րդ հոդվածը, հավելենք, որ հոդվածով նշված հանցակազմի դիսպոզիցիան որպես օբյեկտիվ կոդմ նշում է նաև ընտրական հանձնաժողովի արձանագրությունների պատճենները, քաղվածքները չտալը, որը պատժվում է 3-ից 5 տարի ազատազրկմամբ:

9) լուսանկարահանելու, տեսանկարահանելու ընտրական հանձնաժողովների նիստերը, ինչպես նաև քվեարկության ընթացքը, քվեարկության արդյունքների ամփոփման գործընթացը և քվեարկության արդյունքների վերահաշվարկի աշխատանքները՝ չխախտելով ընտրողների քվեարկության գաղտնիության իրավունքը: Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ դիտորդները կարող են լուսանկարել կամ տեսանկարահանել ընտրական տեղամասում կազմված քվեարկության արդյունքների արձանագրությունը:

10) պահանջելու և ստանալու Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ քվեարկության ավարտից հետո տեխնիկական սարքավորման միջոցով տպոդ տեղեկանքը, որում նշված են սարքավորման միջոցով գրանցված ընտրողների հերթական համարները: Եթե տեխնիկական սարքավորումն անխափան աշխատել է քվեարկության ընթացքում, ապա Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ տեխնիկական սարքավորման միջոցով տպում է տեղեկանք, որում նշվում են տարածքային ընտրական հանձնաժողովի և ընտրական տեղամասի համարները, տեխնիկական սարքավորման միջոցով գրանցված ընտրողների հերթական համարը համապատասխան ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում: Տեղեկանքը պետք է պարունակի նշում այն ընտրողների վերաբերյալ, որոնց գրանցումն իրականացվել է անձը հաստատող փաստաթղթի տվյալները ստեղնաշարով տեխնիկական սարքավորման մեջ ներմուծելու միջոցով: Տեղեկանքի մեկական օրինակ, ստորագրված տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից և կնքված հանձնաժողովի կնիքով, ըստ պահանջի տրամադրվում է ամփոփման նիստին ներկա գտնվող դիտորդներին:

11) հետևելու ընտրողների ցուցակների սկանավորման աշխատանքներին: Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ տարածքային ընտրական հանձնաժողովը քվեարկության հաջորդ օրը՝ ժամը 12.00-ից սկսած, իրականացնում է ընտրողների ցուցակների սկանավորում, որին կարող են հետևել նաև դիտորդները:

12) մասնագիտացված կազմակերպությունից պահանջելու և ստանալու ընտրական տեղամասում իրականացված տեսանկարահանված նյութերից պատճեններ: Մասնագիտացված կազմակերպությունն ընտրական տեղամասում իրականացված տեսանկարահանված նյութերից պատճեններ՝

գրավոր դիմումի հիման վրա, տրամադրում է դիտորդական առաքելություն իրականացրած կազմակերպություններին՝ պատճենահանման ինքնարժեքի վճարման պայմանով: Դիմումը կարող է ներկայացվել մինչև Ազգային ժողով ընտրվելու մասին Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշման վիճարկման համար սահմանված ժամկետի ավարտը, իսկ այդ որոշման վիճարկման դեպքում՝ մինչև Սահմանադրական դատարանի որոշում ընդունելը: Դիմումը պետք է ներառի այն ընտրական տեղամասի համարը, որի տեսանկարահանված նյութերից պահանջվում է պատճենը, և դիմումի հետ պետք է ներկայացվի մասնագիտացված կազմակերպության կողմից սահմանված պահանջները բավարարող էլեկտրոնային կրիչ:

13) ազատ տեղաշարժվելու քվեարկության սենյակում՝ քվեաթերթիկների, քվեարկության ծրարների, ընտրողների ցուցակների ու քվեատուփի դիտարկման համար.

14) հրապարակայնորեն, այդ թվում՝ զանգվածային լրատվության միջոցներով հայտնելու կարծիք, անելու հայտարարություն՝ ընտրությունների կազմակերպման և անցկացման վերաբերյալ¹: Դիտորդական առաքելություն իրականացրած կազմակերպությունների՝ ընտրությունների վե-

¹ Համեմատելու համար մեջբերենք ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի «Դիտորդների համար Վարքագծի կանոնագիրքը», ըստ որի՝ «Դիտորդների բոլոր եզրահանգումների համար պետք է հիմք հանդիսանա իրենց անձնական դիտարկումները կամ հստակ և համոզիչ փաստերը կամ ապացույցները: Դիտորդները չպետք է լրատվամիջոցներին որևէ դիտողություններ ներկայացնեն ընտրական գործընթացի կամ իրենց դիտարկումների վերաբերյալ, իսկ լրատվամիջոցներին տված ցանկացած մեկնաբանություն պետք է սահմանափակվի դիտորդական առաքելության և դիտորդների դերի վերաբերյալ ընդհանուր տեղեկատվությամբ»:

րաբերյալ ներկայացված զեկույցները տեղադրվում են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում:

15) բողոքարկելու ընտրական հանձնաժողովի որոշումները, գործողությունները (անգործությունը) վարչական կամ դատական կարգով, եթե գտնում է, որ խախտվել են դիտորդի Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված իրավունքները: Ընտրական հանձնաժողովներ ներկայացված դիմումը պետք է ստորագրված լինի, ներառի դիմողի անունը, ազգանունը, հասցեն, տրման ամսաթիվը (կարող է ներառել նաև դիմումատուի հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն): Դիմումում պետք է սահմանված լինի դիմումատուի պահանջը, բերված լինեն հիմնավորումները, իսկ հնարավոր ապացույցները պետք է կցված լինեն դիմումին: Եթե դիմումը ներկայացվում է ներկայացուցչի միջոցով, ապա պետք է ներկայացվի նաև օրենքով սահմանված կարգով տրված լիազորագիր: Դիտորդի կողմից ներկայացված դիմումներին կից պետք է ներկայացվի դիտորդի կարգավիճակը հավաստող փաստաթղթի (սահմանված նմուշի վկայականի) պատճենը:

16) պահանջելու, որ իր գնահատականն արձանագրվի տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում, եթե դիտորդը գտնում է, որ քվեարկության ընթացքում տեղի է ունեցել Ընտրական օրենսգրքով նախատեսված քվեարկության կարգի խախտում: Նման իրավունք դիտորդները ձեռք են բերել միայն նոր Ընտրական օրենսգրքի կանոնակարգումների շրջանակներում: Նախկինում նշված իրավունքը վերապահված էր միայն վստահված անձանց և հանձնաժողովի անդամներին: Որպես դրական կարգավորում այս իրավունքը շեշտադրվել է նաև վերը հիշատակված Վենետի-

կի հանձնաժողովի և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի համատեղ զեկույցի 66-րդ կետում:

Ընտրական օրենսգրքով սահմանված են նաև դիտորդի պարտականությունները, որոնք կներկայացնենք երկու ձևաչափով՝ բուն պարտավորություններ և արգելքներ: Այսպես, ***դիտորդը պարտավոր է՝***

1. իր իրավունքներն իրականացնելիս լինել անկողմնակալ, չեզոք, հրապարակայնորեն որևէ կանխակալ դիրքորոշում չարտահայտել կամ նախապատվելի վերաբերմունք չդրսևորել իշխանության կամ ընդդիմության, թեկնածուների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների հետ կապված որևէ հարցի նկատմամբ: Դիտորդներն իրենց անձնական դիտարկումները կարող են ներկայացնել ընտրական հանձնաժողովներին դիտորդական առաքելության զեկույցի միջոցով: Դիտորդների բոլոր եզրահանգումների համար պետք է հիմք հանդիսանան իրենց անձնական դիտարկումները¹.

2. գրանցվել ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում ընտրական հանձնաժողովի նիստերին, ինչպես նաև քվեարկության ընթացքում՝ քվեարկության սենյակում ներկա գտնվելու համար.

¹ Համեմատելու համար մեջբերենք ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի «Դիտորդների համար Վարքագծի կանոնագիրքը», ըստ որի՝ «Իրենց պարտականություններն իրականացնելիս դիտորդները պետք է բացառապես անկողմնակալ լինեն և ոչ մի դեպքում հրապարակայնորեն որևէ կանխակալ դիրքորոշում չարտահայտեն կամ նախապատվելի վերաբերմունք չդրսևորեն իշխանության մարմինների, կուսակցությունների, թեկնածուների կամ ընտրական գործընթացի հետ կապված որևէ հարցի նկատմամբ»:

3. դիտորդի իր վկայականը տեսանելի ձևով կրել վերնագրեստի վրա¹.

4. պահպանել Ընտրական օրենսգրքի պահանջները²:

Դիտորդն իրավունք չունի՝

1. միջամտելու ընտրական հանձնաժողովի աշխատանքներին.

2. միջամտելու ընտրական հանձնաժողովի կողմից որոշումների ընդունմանը.

3. միջամտելու քվեարկության ընթացքին.

4. իրականացնելու քարոզչություն.

5. ընտրական հանձնաժողովի անդամներին տալու ցուցումներ, ներկայացնելու պահանջներ³.

6. կատարել միջազգային իրավունքի նորմերին հակասող կամ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով չսահմանված գործառույթներ:

Դիտորդների իրավական կարգավիճակը Հայաստանի

¹ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի Դիտորդների համար Վարքագծի կանոնագրքի համաձայն՝ «Դիտորդները պետք է կրեն սահմանված տարբերակման նշանները, որոնք տրվում են ընդունող երկրի կառավարության կամ ընտրական հանձնաժողովի կողմից, և նման պահանջի դեպքում իրենց ինքնությունը ներկայացնեն ցանկացած պաշտոնյայի»:

² ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի Դիտորդների համար Վարքագծի կանոնագրքի համաձայն՝ «Դիտորդները պետք է ենթարկվեն բոլոր ազգային օրենքներին և կանոնակարգերին»:

³ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի Դիտորդների համար Վարքագծի կանոնագրքի համաձայն՝ «Դիտորդներն իրենց պարտականությունները պետք է իրականացնեն աչքի չընկնող եղանակով առանց միջամտելու ընտրական գործընթացին: Դիտորդները կարող են հարցեր տալ ընտրությունների համար պատասխանատու պաշտոնյաներին և նրանց ուշադրությունը հրավիրել խախտումների վրա, սակայն չպետք է ցուցումներ տան կամ չեղարկեն նրանց որոշումները»:

Հանրապետությունում ամբողջական պատկերացնելու համար անհրաժեշտ է անդրադառնալ նաև դիտորդների իրավունքների հնարավոր սահմանափակումներին: Նախ, Ընտրական օրենսգրքի 32-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է ընդհանուր կանոն, ըստ որի դիտորդի՝ Ընտրական օրենսգրքով սահմանված իրավունքների որևէ սահմանափակում չի թույլատրվում: Միաժամանակ, օրենսգիրքը հստակ թվարկում է այն դեպքերը, երբ դիտորդի՝ Ընտրական օրենսգրքով սահմանված որոշ իրավունքներ կարող են սահմանափակվել: Այսպես.

1. ***հանձնաժողովի նախագահն արգելվում է դիտորդի գտնվելն ընտրական հանձնաժողովում, իսկ քվեարկության օրը՝ քվեարկության սենյակում, եթե դիտորդը ներկայանում է առանց վերնագրեստի վրա համապատասխան վկայականը տեսանելի կրելով*** (Ընտրական օրենսգրքի 46-րդ հոդվածի 8-րդ մաս): Այս սահմանափակումը թելադրված է այն սկզբունքով, որ ընտրական գործընթացներին հետևելու, մասնակցելու հնարավորություն անձը ստանում է միայն որևէ կարգավիճակ (բացառությամբ ընտրողի) ձեռքբերելուց հետո: Որևէ կարգավիճակով չօժտված անձը չի կարող ներկա գտնվել ընտրական հանձնաժողովների նիստերին կամ քվեարկության օրը քվեարկության սենյակում: Ներկա գտնվողը պետք է կարողանա հավաստել իր կարգավիճակը տվյալ ընտրական գործընթացում: Այս մոտեցման ապահովմանն է ուղղված հանձնաժողովի նախագահի վերոհիշյալ լիազորությունը:

2. ***Եթե քվեարկության սենյակում գտնվող դիտորդների, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների թիվն այնքան է, որ ակնհայտորեն խաթարում է քվեարկության բնականոն ընթացքը, ապա տեղամասային ընտրական հանձնաժողովն իրավասու է սահմանելու քվեարկության***

սենյակում միաժամանակյա գտնվելու իրավունք ունեցող դիտորդների և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների առավելագույն թիվը: Այս սահմանափակումը չի տարածվում այցելուների, միջազգային դիտորդների և վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող հեռուստառադիոընկերությունների ներկայացուցիչների վրա: Նշված սահմանափակման առկայությունը Ընտրական օրենսգրքի նախագծում մտահոգություն էր առաջացրել եվրոպական կառույցների մոտ: Սակայն վերջնական տարբերակում Ընտրական օրենսգրքն ամրագրեց համաչափության սկզբունքի ապահովման պահանջը, մասնավորապես նշելով, որ որոշումը պետք է համապատասխանի համաչափության սկզբունքին, և ամեն դեպքում այդ որոշմամբ սահմանված թիվը չի կարող նվազ լինել 15-ից: Նշվածի կապակցությամբ երկրորդ և վերջնական համատեղ զեկույցում Վենետիկի հանձնաժողովի ու ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի զեկույցի 65-րդ կետում ընդգծվել է օրենսգրքի վերջնական տարբերակում համաչափության սկզբունքի ամրագրումը, միաժամանակ նշելով, որ «մնում է տեսնել, թե ինչպես համապատասխան դրույթը կկիրառվի գործնականում»: Նշենք նաև, որ Ընտրական օրենսգրքը միաժամանակ սահմանում է, որ դիտորդների և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների առավելագույն թվի սահմանափակումը կարող է տեղի ունենալ միայն տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն 2/3-ով ընդունված որոշմամբ:

3. *Դիտորդը կարող է հեռացվել ընտրական հանձնաժողովի նիստից, իսկ քվեարկության օրը՝ տեղամասային կենտրոնից, երբ՝*

ա/ դիտորդն աջակցում է որևէ թեկնածուի, ընտրություն-

ներին մասնակցող որևէ կուսակցության.

բ/ խախտում է Ընտրական օրենսգրքի պահանջներն այն եղանակով, որն էապես խաթարում է ընտրական հանձնաժողովի բնականոն աշխատանքը կամ քվեարկության բնականոն ընթացքը:

Դիտորդին ընտրական հանձնաժողովի նիստից, իսկ քվեարկության օրը՝ տեղամասային կենտրոնից՝ հեռացնելու մասին որոշումն ընդունվում է ընտրական հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն 2/3-ով: Դիտորդին տեղամասային կենտրոնից կամ ընտրական հանձնաժողովի նիստերից դուրս հրավիրելու դեպքում ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում կատարվում է համապատասխան գրառում՝ նշելով պատճառները: Կենտրոնական ընտրական հանձնաժողովը, փորձելով ստեղծել պայմաններ՝ նշված սահմանափակումը բացառապես ծայրահեղ դեպքերում կիրառելու համար, ընտրական հանձնաժողովներին հորդորելուց բացի, իր 2016 թվականի հունիսի 17-ի թիվ 35-Ն որոշմամբ հաստատված տեղամասային ընտրական հանձնաժողովի կանոնակարգի 33-րդ կետով սահմանել է մինչև դիտորդին հանձնաժողովի նիստից կամ քվեարկության սենյակից հեռացնելը կիրառել նրա նկատմամբ նախագգուշացում, որն իրականացվում է որոշմամբ: Եվ միայն նախագգուշացում կիրառելուց հետո, եթե տվյալ պարագայում դիտորդը կշարունակի խախտել Ընտրական օրենսգիրքն այն եղանակով, որն էապես կխաթարի ընտրական հանձնաժողովի բնականոն աշխատանքը կամ քվեարկության բնականոն ընթացքը, դիտորդը վերը նշված ընթացակարգով կարող է հեռացվել հանձնաժողովի նիստից կամ քվեարկության սենյակից:

Ամփոփելով զեկույցը, ընդգծենք, որ ՀՀ օրենսդրության

վերջին տարիների ուսումնասիրությունները փաստում են, որ ընտրական գործընթացները Հայաստանի Հանրապետությունում ամենակարգավորված իրավահարաբերություններից են, սակայն, չնայած դրան, գուցե նաև դրա շնորհիվ, ընտրությունների կազմակերպման և անցկացման գործընթացում առաջանում են բազմաթիվ և բազմաբնույթ իրավիճակներ, որոնք լուծում են պահանջում: Այս տեսակետից ընտրական գործընթացի մասնակիցների, այդ թվում՝ նաև դիտորդների, համար գերխնդիր պետք է դառնա օրենքի տառին և ոգուն համահունչ վարքագծի դրսևորումը: Իշխանական տարբեր ատյաններ (ընտրական հանձնաժողովներ, ոստիկանություն և այլն) պետք է ոչ միայն գործեն օրինականության սկզբունքին համապատասխան, այլ նաև բավարար քաղաքական կամք դրսևորեն ընտրական հարաբերություններում որևէ տեսակի խախտումների բացառման համար: Միաժամանակ, հարկ ենք համարում շեշտադրել, որ ընտրական իրավահարաբերությունների և ընտրական գործընթացների բնականոն ընթացքի ապահովման համար պատասխանատվության բաժինն ունեն ընտրական գործընթացների բոլոր մասնակիցները, այդ թվում՝ նաև դիտորդները, ովքեր իրենց անկողմնակալ դիտարկումներով, ծագած և հրատապ լուծում պահանջող խնդիրների մասին ժամանակին և պատշաճ ատյաններում և ընթացակարգերով բարձրաձայնելու միջոցով ի գորու են մեծապես նպաստել Հայաստանի Հանրապետությունում ընտրական գործընթացների բարելավմանը:

Գևորգ Դանիելյան
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի
սահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչ,
իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ԸՆՏՐԱԿԱՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ԴԻՏՈՐԴՆԵՐԻ
ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՀ ընտրական օրենսգրքով ընտրական վարչարարության, ինչպես նաև այդ գործընթացում դիտորդների մասնակցության հիմնական իրավական հիմքը համարվում է «Վարչարարության հիմնումքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը: Միաժամանակ, նշված օրենսգրքով սահմանված են մի շարք առանձնահատկություններ, որոնք էապես տարբերվում են ընդհանուր կանոններից: Այս կտրվածքով դեռևս համարժեք իրավահամեմատական վերլուծություն ու գիտագործնական չափանիշներով հետազոտություն չի իրականացվել, ինչը կօգնեի նախընտրական փուլում հնարավոր հարցադրումների ու վիճահարույց տեսակետերի առկայության դեպքում կողմնորոշիչ դիրքորոշում ունենալուն:

Ընտրական վարչարարության ինստիտուտը, դրսևորվելով, որպես մարդու սահմանադրական իրավունքի իրացման հիմնարար ընթացակարգ, վերաբերում է ընտրական հանձնաժողովներում և ընտրական գործընթացի հետ առնչվող իրավասու այլ մարմիններում ընտրական իրավունքի իրացման, ինչպես նաև պաշտպանության վերաբերյալ դիմումներ ներկայացնելու, վարչական ակտերը վիճարկելուն ուղղված բողոքներ ներկայացնելու և դրանք քննելու հարաբերությունների: Տվյալ դեպքում ելակետ է ընդունվել այն իրողությունը,

որ ընտրական իրավունքի խախտումների վերաբերյալ դիմումներն ու բողոքները, որպես կանոն, անհամեմատ մեծաքանակ են, ինչը հանգեցնում է ոչ միայն զգալի ծանրաբեռնվածության, այլև նվազեցնում է դրանց քննարկման արդյունավետությունը: Այս տեսանկյունից էական նշանակություն է ձեռք բերում այն հարցադրումը, թե դիտորդները կոնկրետ ինչպե՞ս պետք է կազմակերպեն իրենց աշխատանքը, որպեսզի իրենց քայլերը ոչ միայն համահունչ լինեն գործող օրենսդրության հետ, այլև հանգեցնեն ակնկալվող արդյունքների:

Ըստ էության, այս փուլում խիստ անհրաժեշտ է դիտվում ընտրական վարչարարության գործընթացում դիտորդների մասնակցության ուսումնական ձեռնարկների պատրաստումը, սակայն նախընտրական ժամանակահատվածում դեռևս իրատեսական չէ ակնկալել այնպիսի ձեռնարկների մշակում, որոնք իրենց որակով ու հարցերի ընդգրկվածության աստիճանով կկարողանան համարվել ամբողջական ու մատչելի, ուստի նախապես հարկ է համալիր հետազոտել այս փուլում առկա առավել հրատապ ու արդիական հարցերը և դրանց առնչությամբ ներկայացնել որոշակի ուղենիշային լուծումներ:

Ընդհանուր առմամբ վերը նշված ինստիտուտի կիրառման փուլում խնդրահարույց իրավիճակների ի հայտ գալու հավանականությունն անչափ մեծ է, ինչը թելադրված է հետևյալ գործոններով՝

- օրենսդրությամբ նախատեսված են ընտրական վարչարարության այնպիսի առանձնահատկություններ, որոնք դեռևս իրենց նախադեպը չունեն վարչարարության մյուս տեսակների իրավական հիմքերում, այսինքն՝ առկա է փորձարկման բացակայության խնդիր՝ դրանից բխող բոլոր բացասական հետևանքներով հանդերձ,

- ընտրական վարչարարության առանձնահատկությունները գործնականում նախատեսում են դիտորդների համար լրացուցիչ պարտականություններ, հատկապես, կապված ապացուցման բեռի հետ, ինչը ոչ միայն նորույթ է, այլև ուղեկցվել է այնպիսի շարադրանքով, որը կարող է խնդրահարույց լինել իրավական որոշակիության տեսանկյունից,

- ընտրական վարչարարության համար ողջամտորեն սահմանված են սեղմ ժամկետներ, իսկ դիտորդների հիմնական առաքելության տեսանկյունից, զուտ վարչարարության վրա սեղմ ժամկետում ծավալուն գործունեություն իրականացնելը կվտանգի նրանց գործունեության արդյունավետությունը, որպիսի հանգամանքը ևս ենթադրում է այդ իրավիճակում առավել խնայողական ընթացակարգով գործելու հմտությունների ձեռք բերման համար համարժեք ուղեցույց և այլն:

Ինչևէ, օրենսդրության դրական և բացասական բաղադրիչների մասին առավել սպառիչ եզրահանգումներ հնարավոր կլինի առաջադրել դրա կիրառման արդյունքների վերլուծության ու գնահատման պարագայում, ուստի այս փուլում առավել իրատեսական կարող է համարվել քննարկման առարկա հարցադրումների իրավական հիմքերի պարզաբանումն ու խնդրահարույց ձևակերպումների առնչությամբ հնարավորինս որոշակի դիրքորոշումների առաջադրումը:

Նախ, անդրադառնանք այն հարցադրմանը, թե որո՞նք են վարչարարության այս կամ այն տեսակի առնչությամբ ընդհանուր կանոններից շեղվող առանձնահատկություններ սահմանելու իրավական հիմքերը: Այս տեսանկյունից հարկ է նկատել, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով ամրագրված է հետևյալ դրույթը. «Առանձին տեսակի վարչական

վարույթների առանձնահատկությունները սահմանվում են օրենքներով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով»:

Այսպիսով, եթե ընտրական գործընթացներում իրականացվող վարչական վարույթը դիտարկենք, որպես առանձին տեսակի վարչական վարույթ, ապա օրենսդրությամբ առանձնահատկություններ սահմանելը համահունչ է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով ամրագրված իրավական նորմին: Մեր կարծիքով, ընտրական գործընթացներում իրականացվող վարչական վարույթը կարող է գնահատվել, որպես առանձին տեսակի վարչական վարույթ: Մասնավորապես, ընտրական գործընթացներում վարչական վարույթը անխուսափելիորեն պետք է համահունչ լինի այնպիսի գործոնների, ինչպիսիք են՝ ընտրական գործընթացների խիստ կարգավորված ժամկետները, որոնց շրջանակներում իրավունքների իրացման կամ պաշտպանության ընթացակարգերը էապես տարբերվում են վարչական վարույթի հիմնական կանոններով սահմանված ընթացակարգերից: Մասնավորապես, հիշյալ գործոններով պայմանավորված հարկ է լինում վարչական վարույթն ավարտել անհամեմատ սեղմ ժամկետներում, քանզի մեկ օր անգամ ուշացնելու դեպքում խախտված իրավունքների վերականգնման վերաբերյալ վարչական ակտը որևէ գործնական նշանակություն չի ունենա: Օրինակ, ընտրական ցուցակում ներգրավելու վերաբերյալ պահանջը տրամաբանական է քննարկել և բավարարել մինչև քվեարկության օրը, հակառակ պարագայում այն զրկում է սահմանադրական իրավունքից օգտվելու իրավական հնարավորությունից: Վարույթի առանձին տեսակի առկայության օգտին են վկայում նաև այնպիսի իրավական չափանիշներ,

ինչպիսիք են՝ ընտրական հանձնաժողովների կարգավիճակը, ընտրական իրավունքների իրացման ու պաշտպանության վերաբերյալ դիմումների քննարկման ընթացակարգերը և այլն: Հավելենք, որ այս չափանիշները սոսկ իրավական լուծումների արդյունք չեն, այլ թելադրված են ընտրական իրավունքի իրացման օբյեկտիվ անհրաժեշտությամբ:

Հաջորդ հարցադրումն այն է, թե ինչպիսի՞ն կարող են լինել առանձին տեսակի վարչական վարույթի առանձնահատկությունները, որոնք են դրանց սահմաններն ու նպատակները: Ինչ խոսք, առանձին վարչական վարույթի առանձնահատկությունները չեն կարող ինքնանպատակ լինել, առավել ևս չկանխորոշվել որոշակի իրավական չափանիշներով: Հակիրճ նկատենք, որ վարչական վարույթի յուրաքանչյուր առանձնահատկություն պետք է բացառապես պայմանավորված լինի վարչարարության սկզբունքների առավել արդյունավետ իրացման անհրաժեշտությամբ: Իսկ դա նշանակում է, որ այն ոչ թե պետք է ապրիորի հանգեցնի մարդկանց համար լրացուցիչ պարտականություններ սահմանելուն կամ իրավունքների սահմանափակմանը, այլ տվյալ իրավիճակում ձևավորի վարչարարության այնպիսի կառուցակարգ, որի դեպքում վարչարարությունը բոլոր ասպեկտներով, և, առաջին հերթին, մարդու իրավունքների իրացման ու պաշտպանության արդյունավետության կտրվածքով, կարող է լինել առավել արդյունավետ:

Հավելենք, որ առանձին տեսակի վարչական վարույթի առանձնահատկություններ սահմանելիս չեն կարող այս կամ այն չափով վերանայվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով ամրագրված վարչարարության սկզբունքները. վերջիններս համընդհանուր իրավական նշանակություն ունեն և կիրառելի են ցանկացած տե-

սակի վարչական վարույթի պարագայում: Նկատենք, որ նշված օրենքի 4-11-րդ հոդվածներով վարչարարության սկզբունքներն են համարվում՝ վարչարարության օրինականությունը, ձևական պահանջները չարաշահելու արգելքը, հայեցողական լիազորությունները սահմանափակելը, կամայականության արգելքը, վարչարարության համաչափությունը, առավելագույնի սկզբունքը, հավաստիության կանխավարկածը և տնտեսավարությունը: Միաժամանակ, նշված օրենքի 12-րդ հոդվածով ամրագրված է, որ հիշյալ սկզբունքները սպառիչ չեն, օրենսդրությամբ կարող են սահմանվել նաև վարչարարության այլ սկզբունքներ:

Իրավական կարգավորման վերը նշված դատողությունները բխում են 2015 թ. խմբագրությամբ Մահմանադրության առնվազն 3-րդ հոդվածի 3-րդ մասի հետևյալ հիմնադրույթով. «Հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք», և 80-րդ հոդվածում ամրագրված սկզբունքը. «Հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ սույն գլխում ամրագրված դրույթների էությունն անխախտելի է»:

Այսպիսով, ընտրական վարչարարության առանձնահատկությունները գնահատելիս, հարկ է հիմք ընդունել այն իրավական դիրքորոշումը, թե որքանով են դրանք համահունչ Մահմանադրության հիշյալ հիմնադրույթներին:

Այժմ անդրադառնանք կոնկրետ ընտրական վարչարարության առանձնահատկությունների իրավական հիմքերին: Նախ, ՀՀ ընտրական օրենսգրքի «Կենտրոնական և տարածքային ընտրական հանձնաժողովում վարչական վարույթի առանձնահատկությունները» վերտառությամբ 47-րդ հոդվածով սահմանված են ընտրական վարչարարության հիմնա-

կան առանձնահատկությունները: Միաժամանակ, հարկ է նկատել, որ առանձնահատկությունների շրջանակը սահմանափակված չէ միայն այդ հոդվածով, թեպետ՝ վերջինիս բովանդակությունից բխում է, որ դրանում պետք է ներառված լինեին բոլոր առանձնահատկությունները: Խնդիրն այն է, որ վարչարարության որոշ առանձնահատկություններ են նախատեսում նաև նույն օրենսգրքի «Ընտրական հանձնաժողովների որոշումները, գործողությունները և անգործությունը բողոքարկելը, ընտրական տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու կամ ընտրությունների արդյունքներն անվավեր ճանաչելու մասին դիմում ներկայացնելը» վերտառությամբ 48-րդ ու «Դիմումներին ներկայացվող պահանջները: Ընտրական հանձնաժողովներում դիմումների քննարկման կարգը: Ապացուցման բեռը» վերտառությամբ 49-րդ հոդվածները և մի շարք այլ հոդվածներ, որոնց կանդիդատնանք ստորև:

Ընտրական վարչարարության առանձնահատկությունները: Ընտրական վարչարարության առանձնահատկությունները, հիմնականում, վերաբերում են Կենտրոնական և տարածքային ընտրական հանձնաժողովներում իրականացվող վարչարարությանը: Այսպես. ՀՀ ընտրական օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, այդ հանձնաժողովներում. «... վարչական վարույթն իրականացվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան, սույն օրենսգրքով սահմանված առանձնահատկություններով և ժամկետներում»: Մասնավորապես, Կենտրոնական ընտրական հանձնաժողովում դիմումի կամ բողոքի քննարկման մասին դիմումատուն կամ բողոք ներկայացնողը պետք է ծանուցվի՝ դիմումի քննարկման օրվա և ժամի

մասին հանձնաժողովի համացանցային կայքում տեղեկություն տեղադրելու միջոցով: Դիմումատուն կարող է տեղեկացվել նաև իր դիմումում նշված էլեկտրոնային կապի միջոցով՝ հեռախոսահամար, էլեկտրոնային փոստային հասցե, միաժամանակ, ըստ հնարավորության՝ ուղարկվում է նաև կարճ հաղորդագրություն:

Տարածքային ընտրական հանձնաժողովում դիմումի քննարկման մասին դիմումատուն համարվում է ծանուցված դիմումի քննարկման օրվա և ժամի մասին հանձնաժողովում բոլորի համար տեսանելի տեղում ծանուցում փակցնելու միջոցով, իսկ դիմումում հեռախոսահամար նշելու դեպքում՝ ծանուցումն իրականացվում է նաև այդ միջոցով, ըստ հնարավորության՝ նաև կարճ հաղորդագրություն ուղարկելու միջոցով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածով ևս նախատեսված է պատշաճ ծանուցման նախապայման, սակայն ամրագրված չէ ծանուցման միջոցների այնպիսի լայն շրջանակ, որը բնորոշ է արդեն ընտրական վարչարարությանը: Այս առանձնահատկությունը, ըստ էության, առավել բարենպաստ է հասցատիրոջ համար: ՀՀ վճռաբեկ դատարանն իր 2011 թ. հոկտեմբերի 20-ի թիվ ԿԴ/0008/06/11 գործով կայացված որոշմամբ անդրադարձել է պատշաճ ծանուցման ինստիտուտին, սակայն այն բացառապես վերաբերում է դատական նիստերի մասին ծանուցման իրավական հիմքերին, ուստի չի կարող համընդհանուր նշանակություն ունենալ: Ինչ վերաբերում է Հայաստանի Հանրապետության Կառավարություն 2011 թ. փետրվարի 17-ի «Ինտերնետով հրապարակային ծանուցման ներկայացման և կայքը վարող անձին փոխանցման, կայքում հրապարակային ծանուցում-

ների տեղադրման ու տեղեկատվության արխիվացման ժամկետների սահմանման կարգը և ինտերնետով հրապարակային ծանուցման ենթակա հայտարարության էլեկտրոնային ձևվաչափը հաստատելու մասին» թիվ 174-Ն որոշմանը, ապա այն ևս չի կարող համընդհանուր իրավական նշանակություն ունենալ, քանի որ վերաբերում է բացառապես էլեկտրոնային ստորագրություն գրանցած անձանց և այլն:

Կարևոր առանձնահատկություններից է այն, որ վարչական վարույթն իրականացնող ընտրական հանձնաժողովի կազմին կամ հանձնաժողովի անդամին վարույթի մասնակիցները չեն կարող բացարկ հայտնել, ընդ որում, վարույթ իրականացնող նույն սուբյեկտները ևս ինքնաբացարկ հայտնելու իրավունք չունեն:

Այս առանձնահատկությունը բացատրվում է ընտրական հանձնաժողովների կազմի և կարգավիճակի առանձնահատուկ իրավական հիմքերով, մասնավորապես բացարկի ինստիտուտը կհանգեցնի վարչարարության բնականոն ընթացքի խաթարմանը, քանզի հանձնաժողովի անդամներին այլ անձանցով վարչական եղանակով փոխարինելու ընթացակարգ չկա: Մինչդեռ՝ դա առանց որևէ խոչընդոտի կարող է կիրառվել վարչարարության մյուս տեսակների պարագայում, ինչն էլ հաշվի առնելով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված է. «Վարույթի մասնակիցները կարող են գրավոր բացարկ հայտնել վարչական վարույթն իրականացնող պաշտոնատար անձին, իսկ օրենքով նախատեսված դեպքերում կոլեգիալ կազմով վարչական վարույթ իրականացնելիս՝ կոլեգիալ կազմի ցանկացած անդամի»: Ինքնաբացարկը նախատեսված է նույն օրենքի 26-րդ հոդվածով:

Հաշվի առնելով ընտրությունների ժամանակահատվածում աշխատանքային ծանրաբեռնվածությունը, հիշյալ հոդվածի 4-րդ մասով ամրագրված է, որ վարչական վարույթի մասնակիցները վարչական վարույթի նյութերին ծանոթանում են վարույթն իրականացնող ընտրական հանձնաժողովում՝ այդ վարույթով հրավիրված նիստից առաջ: Հանձնաժողովի նիստը համառոտ արձանագրվում է: Սա ևս բարենպաստ առանձնահատկություն է, քանի որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Վարչական վարույթի նյութերին ծանոթանալու հնարավորությունը պետք է տրվի համապատասխան դիմումը ներկայացնելու օրվանից երեք օրվա ընթացքում»: Այսպիսով, ընտրական վարչարարության դեպքում դիմում ներկայացնելու անհրաժեշտություն չկա, քանի որ նյութերին ծանոթանալու իրավունքը ծագում է անմիջապես օրենքի ուժով:

Հաջորդ առանձնահատկությունը վերաբերում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի ընդունած վարչական ակտի ուժի մեջ է մտնելու ժամկետին, ըստ նշված օրենսդրական ակտի 47-րդ հոդվածի 5-րդ մասի, այդ վարչական ակտերն ուժի մեջ են մտնում նիստում հրապարակման պահից: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի ընդունած վարչական ակտը, միաժամանակ, տեղադրվում է հանձնաժողովի համացանցային կայքում ՀՀ ընտրական օրենսգրքի 8-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետում, այսինքն՝ այդ ակտերն ընդունվելուց հետո՝ մինչև հաջորդ օրվա ավարտը: Նույն 8-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված է նաև Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքը՝ www.elections.am:

Նիստում հրապարակելու պահից է ուժի մեջ մտնում նաև տարածքային ընտրական հանձնաժողովի ընդունած վարչական ակտը: Միաժամանակ, այդ վարչական ակտը փակցվում է տարածքային ընտրական հանձնաժողովում՝ բոլորի համար տեսանելի տեղում, ակտն ընդունելուց հետո՝ 24 ժամվա ընթացքում:

Վերը նշված բոլոր վարչական ակտերն ընդունելուց հետո՝ եռօրյա ժամկետում, ուղարկվում են վարչական վարույթի մասնակիցներին՝ առաքման անդորրագիրը կցելով գործին, եթե այդ ակտը վարույթի մասնակիցները հանձնաժողովում չեն ստացել, իսկ եթե դիմումը ներկայացվել է մեկից ավելի դիմումատուների կողմից համատեղ, ապա ընդունված վարչական ակտն ուղարկվում է դիմումում առաջինը նշված դիմումատուին:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով վարչական ակտի ուժի մեջ մտնելու ընդհանուր կարգն էսպես չի տարբերվում վերը նշված առանձնահատուկ կարգից, մասնավորապես, նշված օրենքի 59-րդ հոդվածի համաձայն, վարչական մարմինը վարույթի մասնակիցներին վարչական ակտի ընդունման մասին իրազեկում է հանձնման կամ հրապարակման եղանակով: Գրավոր վարչական ակտը ընդունումից հետո 3-օրյա ժամկետում պետք է հանձնվի վարույթի մասնակիցներին: Դա կարող է իրականացվել պատվիրված փոստով, այդ թվում՝ ստանալու մասին ծանուցմամբ, հասցեատիրոջը ստորագրությամբ առձեռն հանձնելու, ինչպես նաև հանձնման այնպիսի եղանակներով, որոնք թույլ են տալիս հաստատել հասցեատիրոջ կողմից ակտը ստանալու կամ օրենքով սահմանված դեպքերում պատշաճ ծանուցված լինելու փաստը: Որպես կանոն, գրավոր

վարչական ակտի հանձնումը պետք է կատարվի ակտը վարույթի մասնակիցներին ստորագրությամբ առձեռն հանձնելու միջոցով: Հանձնման մյուս միջոցները կիրառվում են, եթե որևէ հիմնավոր պատճառով ստորագրությամբ առձեռն հանձնելու հնարավորություն չկա, այդ թվում, եթե հասցեատերն ինքը խնդրել է օգտագործել հանձնման այլ միջոցներ: Վարչական մարմինը գրավոր վարչական ակտը հասցեատիրոջը հանձնելիս պարտավոր է դրա հետ միասին հանձնել նաև այդ ակտի բաղկացուցիչ մաս համարվող փաստաթղթերը: Գրավոր վարչական ակտում, ինչպես նաև դրա բաղկացուցիչ մաս կազմող փաստաթղթերում օրենքով սահմանված կարգով փոփոխություններ և լրացումներ կատարելու դեպքում այդ փոփոխությունները և լրացումները կատարած վարչական մարմինը պարտավոր է սույն հոդվածով սահմանված կարգով դրանք հանձնել վարչական ակտի հասցեատիրոջը: Վարչական ակտն ընդունած վարչական մարմինը, գրավոր վարչական ակտի հասցեատիրոջ խնդրանքով, նրան կարող է տրամադրել նաև վարչական ակտի օտար լեզվով թարգմանված պատճենը, որը պետք է հաստատված լինի համապատասխան վարչական մարմնի պաշտոնական կնիքով:

Վարչական ակտի հրապարակումը կատարվում է վարչական մարմնի տեղեկագրում կամ այլ պաշտոնական տեղեկագրում հրատարակելով կամ զանգվածային լրատվության այլ միջոցներով հրապարակելով: Գրավոր վարչական ակտը ենթակա է պարտադիր հրապարակման, եթե վարչական մարմնին հայտնի չեն այդ ակտով ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ դեպքերում: Գրավոր վարչական ակտը կարող է հրապարակվել նաև վարչական մարմնի նախաձեռնությամբ, եթե ակտի հրապարակումը վարչական մար-

մինը համարում է առավել նպատակահարմար՝ պետության և հանրության շահերի, ինչպես նաև անձանց իրավունքների արդյունավետ պահպանման անհրաժեշտությունից ելնելով:

Մամուլում, զանգվածային լրատվության այլ միջոցներում կամ տեղեկատվության տարածման այլ միջոցներում հրապարակվում է գրավոր վարչական ակտի եզրափակիչ մասը: Նման եղանակով հրապարակման մեջ պետք է նշվի, թե որտեղ կարելի է ամբողջությամբ ծանոթանալ վարչական ակտին, այդ թվում՝ դրա հիմնավորմանը:

Բանավոր վարչական ակտը հրապարակվում է բանավոր ձևով՝ դրա հասցեատիրոջը (հասցեատերերին) հայտարարելու միջոցով: Բանավոր վարչական ակտը կարող է հրապարակվել դրա հասցեատիրոջ համար հասկանալի որևէ օտար լեզվով: Այլ ձևի վարչական ակտը հրապարակվում է օրենքով նախատեսված որևէ տեսքով դրա հասցեատիրոջը (հասցեատերերին) անմիջականորեն տեսանելի, ընկալելի կամ որևէ այլ ձևով հասանելի դարձնելու միջոցով:

Նույն օրենքի 60-րդ հոդվածի համաձայն. «1. Գրավոր վարչական ակտն ուժի մեջ է մտնում այդ ակտի ընդունման մասին՝ սույն օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից, եթե օրենքով կամ այդ ակտով այլ բան նախատեսված չէ:

2. Եթե վարչական ակտը պարունակում է այնպիսի դրույթներ, որոնք ակտի որևէ մասով ուժի մեջ մտնելը կապում են որոշակի պայմանների կամ հանգամանքների առաջացման հետ, ապա վարչական ակտն այդ մասով ուժի մեջ է մտնում համապատասխան պայմանի կամ հանգամանքի առաջացման պահից (պայմանով ակտ):

3. Բանավոր և այլ ձևի վարչական ակտերն ուժի մեջ են

մտնում այդ ակտերը հրապարակելու պահից»:

Առանձնահատկություն է սահմանված նաև վարչական վարույթի կասեցման առնչությամբ, մասնավորապես, ՀՀ ընտրական օրենսգրքի 47-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն, ընտրությունների ժամանակահատվածում վարչական վարույթը չի կասեցվում:

Վարչական վարույթի կասեցումը նախատեսված է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 49-րդ հոդվածով, մասնավորապես սահմանված է, որ վարչական վարույթը պարտադիր կասեցվում է, եթե՝

«ա) անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը մինչև սահմանադրական, վարչական, քաղաքացիական կամ քրեական դատավարության կարգով քննվող գործով որոշում (դատական ակտ) կայացնելը.

բ) վարույթին չի ներկայացել վարչական ակտի հասցեատերը, իսկ օրենքը բացառում է առանց նրա ներկայության համապատասխան վարչական ակտ ընդունելը.

գ) վարչական ակտի ընդունումը հնարավոր է միայն այդ ակտի հասցեատիրոջն ի հայտ բերելու դեպքում»:

Նույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված են կասեցման ֆակուլտատիվ հիմքերը՝

«ա) վարչական ակտի հասցեատերը բացակայում է, և վարչական մարմինը, նախքան վարչական ակտ ընդունելը, անհրաժեշտ է համարում նրա ներկայությունը՝ վարույթին առնչվող որոշ կարևոր հանգամանքներ նրանից պարզելու համար.

բ) ընդունվելիք վարչական ակտի հասցեատեր իրավա-

բանական անձը վերակազմակերպվում է»: Վարչական վարույթը կարող է կասեցվել նաև օրենքով նախատեսված այլ դեպքերում:

Վարչական մարմինը վարչական վարույթի կասեցման վերաբերյալ ընդունում է որոշում, որը եռօրյա ժամկետում պատշաճ ձևով ուղարկվում է վարույթի մասնակիցներին: Վարչական վարույթի կասեցման մասին որոշումը կարող է ընդունվել վարույթի ցանկացած փուլում:

Ըստ էության, ընտրական վարչարարության ընթացքում ևս կարող են ծագել վարչական վարույթը կասեցնելու վերոհիշյալ հիմքերը, սակայն կասեցումը բացառելը, թերևս, թելադրված է ընտրական գործընթացներում որոշակիություն ապահովելու և ընտրական իրավունքի խախտումները վերացնելու միջոցով դրանց իրացման համար իրատեսական հիմքեր ստեղծելու ակնկալիքով: Բնականաբար, գործնականում դա կառաջացնի որոշակի բարդություններ, սակայն, կարծում եմ, դրանք հաղթահարելի են: Անգամ, եթե վիճարկվում է վարչական ակտ, որի հիմքում դրված օրենքի սահմանադրականությունը վիճարկվում է Սահմանադրական դատարանում, կարծում եմ, հարկ է ղեկավարվել այն դիրքորոշմամբ, ըստ որի՝ քանի դեռ օրենքը չի ճանաչվել Սահմանադրությանը հակասող, իրավական ուժ ունի և պետք է կիրառվի:

Վերոհիշյալ մոտեցումը համահունչ է նաև Սահմանադրության 5-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված այն մոտեցմանը, ըստ որի. «Օրենքները պետք է համապատասխանեն սահմանադրական օրենքներին, *իսկ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը՝ սահմանադրական օրենքներին և օրենքներին* (ընդգծումը մերն է)»:

Ինչպես արդեն նշվեց, վարչարարության առաձևահատ-

կություն է սահմանված նաև ՀՀ ընտրական օրենսգրքի մի շարք այլ հոդվածներով: Այսպես, այդ օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ մասով ամրագրված է ընտրական հանձնաժողովի որոշումը, գործողությունը (անգործությունը) բողոքարկելու լիազորություն ունեցող անձանց լայն շրջանակ, մասնավորապես ընդգրկված են ոչ միայն այն անձինք, որոնց սուբյեկտիվ իրավունքները խախտվել կամ կարող էին խախտվել, այլև այն անձինք, որոնք կոչված են օժանդակելու ընտրական գործընթացներին: Այսպես, հիշյալ նորմով այդպիսի իրավունք ունի.

«1) յուրաքանչյուր ոք, ով գտնում է, որ խախտվել կամ կարող է խախտվել իր՝ սույն օրենսգրքով սահմանված սուբյեկտիվ ընտրական իրավունքը.

2) վստահված անձը, եթե գտնում է, որ խախտվել է իր կամ իր վստահորդի՝ սույն օրենսգրքով սահմանված իրավունքը.

3) դիտորդը կամ այցելուն, եթե գտնում է, որ խախտվել է իր՝ սույն օրենսգրքով սահմանված իրավունքը.

4) զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցիչը, եթե գտնում է, որ խախտվել է իր՝ սույն օրենսգրքով սահմանված իրավունքը.

5) ընտրություններին մասնակցող կուսակցության լիազոր ներկայացուցիչը, եթե գտնում է, որ խախտվել է իր կամ իր վստահորդ կուսակցության կամ կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուի՝ սույն օրենսգրքով սահմանված իրավունքը»:

Ընտրական վարչարարության առանձնահատկություններից է նաև բողոքարկման հատուկ ժամկետներ սահմանելը, մասնավորապես նույն 49-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն,

տեղամասային ընտրական հանձնաժողովի ընդունած որոշումների, գործողությունների կամ անգործության մասին բողոքները ներկայացվում են համապատասխան տարածքային ընտրական հանձնաժողով՝ 2 օրվա ընթացքում այն օրվանից, երբ դիմողն իմացել է կամ ողջամտորեն պարտավոր էր իմանալ խախտման մասին: Ընդ որում, նշված բողոքները համապատասխան տարածքային ընտրական հանձնաժողով կարող են ներկայացվել աշխատանքային օրերին՝ ժամը 9.00-ից մինչև 18.00-ն, իսկ քվեարկության նախորդ օրը՝ ժամը 9.00-ից մինչև 19.00-ն: Քվեարկության օրվա ընթացքում կամ քվեարկության հաջորդ օրը տեղամասային ընտրական հանձնաժողովի ընդունած որոշումների, գործողությունների կամ անգործության մասին բողոքները ներկայացվում են համապատասխան տարածքային ընտրական հանձնաժողով՝ քվեարկության օրը ժամը 8.00-ից մինչև ժամը 22.00-ն, կամ քվեարկության հաջորդ օրը՝ ժամը 12.00-ից մինչև ժամը 18.00-ն, կամ քվեարկությունից հետո երկրորդ օրը՝ ժամը 9.00-ից մինչև ժամը 11.00-ն:

Նշված 48-րդ հոդվածի 6-15-րդ մասերով սահմանված են բողոքարկման մյուս առանձնահատկությունները.

«6. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի՝ Ազգային ժողովի ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումները կարող են բողոքարկվել սահմանադրական դատարան: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի այլ որոշումները, ինչպես նաև գործողությունները (անգործությունը) կարող են բողոքարկվել վարչական դատարան:

7. Տարածքային և Կենտրոնական ընտրական հանձնաժողովներն ընտրությունները նշանակվելուց հետո՝ մինչև քվեարկության նախորդ օրը, ստացված դիմումներին պատասխանում, իսկ սույն օրենսգրքով սահմանված դեպքերում

դրանց վերաբերյալ որոշումներ ընդունում են հնգօրյա ժամկետում, բայց ոչ ուշ, քան մինչև քվեարկության սկիզբը: Քվեարկության օրվանից սկսած՝ մինչև արդյունքների ամփոփման համար սահմանված ժամկետից 2 օր առաջ՝ ժամը 18.00-ն, ստացված դիմումներին տարածքային և Կենտրոնական ընտրական հանձնաժողովները պատասխանում, իսկ սույն օրենսգրքով սահմանված դեպքերում դրանց վերաբերյալ որոշումներ ընդունում են մինչև ընտրությունների արդյունքների ամփոփումը, իսկ Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ՝ տարածքային ընտրական հանձնաժողովը՝ մինչև ընտրությունների արդյունքների ամփոփման համար սահմանված ժամկետից մեկ օր առաջ:

8. Սույն հոդվածի 9-15-րդ մասերով սահմանված են բացառություններ սույն հոդվածի 1-7-րդ մասերով սահմանված նորմերից:

9. Ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակի և կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուի գրանցումն անվավեր կամ ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ դիմում կարող է ներկայացնել միայն ընտրություններին մասնակցող կուսակցությունը:

10. Համայնքի ղեկավարի կամ ավագանու անդամի թեկնածուի գրանցումն անվավեր կամ ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ դիմում կարող է ներկայացնել համապատասխանաբար միայն համայնքի ղեկավարի կամ ավագանու անդամի թեկնածուն:

11. Ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակի, ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուի, համայնքի ղեկավարի կամ ավագանու անդամի թեկնածուի գրանցումն անվավեր կամ ուժը կորցրած ճանաչելու մասին

դիմում կարող է ներկայացվել միայն գրանցումն իրականացրած ընտրական հանձնաժողով: Դիմումը պետք է ներկայացվի ոչ ուշ, քան քվեարկության օրվանից 2 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն: Գրանցումն անվավեր կամ ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ դիմումը ընտրական հանձնաժողովը քննարկում և դրա վերաբերյալ որոշում է ընդունում դիմումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում, սակայն ոչ ուշ, քան քվեարկության նախորդ օրը՝ մինչև ժամը 12-00-ն:

Սույն մասի առաջին պարբերությամբ նշված որոշումը կարող է բողոքարկվել վարչական դատարան 3 օրացուցային օրվա ընթացքում այն օրվանից, երբ դիմողն իմացել է կամ ողջամտորեն պարտավոր էր իմանալ խախտման մասին, սակայն ոչ ուշ, քան քվեարկության նախորդ օրը՝ մինչև ժամը 18.00-ն: Վարչական դատարանը որոշում է կայացնում 5 օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան քվեարկության նախորդ օրը:

12. Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու մասին դիմում ներկայացնելու իրավունք ունեն միայն՝

1) ընտրություններին մասնակցող կուսակցությունը, ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուն, համայնքի ղեկավարի կամ ավագանու անդամի թեկնածուն.

2) վստահված անձը, եթե քվեարկության օրը ներկա է գտնվել քվեարկության սենյակում կամ ներկա է գտնվել տեղամասային ընտրական հանձնաժողովի արդյունքների ամփոփման նիստին.

3) համապատասխան տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամը, եթե արձանագրությունում կատարել է գրառում հատուկ կարծիք ունենալու մասին:

13. Ընտրությունների արդյունքներն անվավեր ճանաչելու մասին դիմում իրավունք ունեն ներկայացնելու կուսակցությունը, համայնքի ղեկավարի կամ ավագանու անդամի թեկնածուն:

14. Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու դիմում կարող է ներկայացվել միայն համապատասխան տարածքային ընտրական հանձնաժողով իրավասու անձի կողմից՝ քվեարկության հաջորդ օրը՝ ժամը 12.00-ից մինչև ժամը 18.00-ն, կամ քվեարկությունից հետո երկրորդ օրը՝ ժամը 9.00-ից մինչև ժամը 11.00-ն:

Եթե դիմումի քննարկման արդյունքով տարածքային ընտրական հանձնաժողովը հանգում է այն եզրակացության, որ քվեարկության ընթացքում տեղի են ունեցել սույն օրենսգրքի պահանջների այնպիսի խախտումներ, որոնք կարող էին էապես ազդել քվեարկության արդյունքների վրա, և եթե հնարավոր չէ պարզել քվեարկության իրական արդյունքները, ապա տարածքային ընտրական հանձնաժողովն այդ ընտրական տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր է ճանաչում: Այդ դեպքում նյութերն ուղարկվում են դատախազություն:

15. Ընտրության արդյունքներն անվավեր ճանաչելու մասին դիմում ընտրությունների արդյունքներն ամփոփող ընտրական հանձնաժողով կարող է ներկայացվել ընտրության արդյունքներն ամփոփելու համար սույն օրենսգրքով սահմանված համապատասխան ժամկետից առնվազն 2 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն: Ընտրության արդյունքներն անվավեր ճանաչելու մասին դիմումների քննարկումը կատարվում է ընտրությունների արդյունքների ամփոփման շրջանակում, և դրանց վերաբերյալ առանձին որոշում չի կայացվում»:

Ընտրական վարչարարության առավել էական առանձ-

նահատկություններից են դիմումին ներկայացվող պահանջները և դրանց քննարկման փուլում ապացուցման պարտականությունների բաշխման կարգը: Այս հարաաբերությունների կարգավորմանը նվիրված է ՀՀ ընտրական օրենսգրքի 49-րդ հոդվածը.

«1. Ընտրական հանձնաժողովներ ներկայացված դիմումը պետք է ստորագրված լինի դիմողի կողմից, ներառի նրա անունը, ազգանունը, դիմողի հասցեն, տրման ամսաթիվը: Դիմումը կարող է ներառել նաև դիմումատուի հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն: Դիմումում պետք է սահմանված լինի դիմումատուի պահանջը, բերված լինեն դիմումատուի հիմնավորումները: Հնարավոր ապացույցները պետք է կցված լինեն դիմումին:

Եթե դիմումը ներկայացվում է ներկայացուցչի միջոցով, ապա պետք է ներկայացվի նաև օրենքով սահմանված կարգով տրված լիազորագիր:

Թեկնածուի, վստահված անձի, դիտորդի, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչի, ընտրական հանձնաժողովի անդամի, լիազոր ներկայացուցչի կողմից ներկայացված դիմումներին կից պետք է ներկայացվի դիմումատուի կարգավիճակը հավաստող փաստաթղթի (սահմանված նմուշի վկայականի) պատճենը:

Դիմումատուի վերաբերյալ տվյալներ չներառող կամ կեղծ տվյալներ ներառող դիմումները, իրավունքի չարաշահմամբ ներկայացված դիմումները, ոչ իրավասու անձի կողմից ներկայացված դիմումները, ինչպես նաև սույն մասի երկրորդ պարբերությամբ սահմանված պահանջների խախտմամբ ներկայացված դիմումները չեն քննարկվում, դրանցով վարչական վարույթներ չեն հարուցվում, և ընտրական հանձնաժողովները որոշում են կայացնում վարչական վարույթի հարուցումը մերժելու մասին: Այդ դեպքում ընտրական հանձ-

նաժողովն իրավունք ունի սեփական նախաձեռնությամբ իրականացնելու վարչական վարույթ:

2. Եթե դիմումում առկա են ձևական սխալներ, որոնք կարող են շտկվել, ապա ընտրական հանձնաժողովը կամ ինքն է շտկում դրանք՝ նախապես կամ հետագայում դիմողին իրազեկելով այդ մասին, կամ դիմողին հնարավորություն է ընձեռում շտկելու այդ սխալները՝ սահմանելով ողջամիտ ժամկետ: Եթե դիմումին կից փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, ապա ընտրական հանձնաժողովը համալրման համար սահմանում է ողջամիտ ժամկետ: Նշված ժամկետում սխալները չվերացնելու կամ փաստաթղթերը չլրացնելու դեպքում դիմումները չեն քննարկվում, դրանցով վարչական վարույթներ չեն հարուցվում, և ընտրական հանձնաժողովները որոշում են կայացնում վարչական վարույթի հարուցումը մերժելու մասին: Այդ դեպքում ընտրական հանձնաժողովն իրավունք ունի սեփական նախաձեռնությամբ իրականացնելու վարչական վարույթ:

3. Դիմողը դիմումը հասցեագրում է այն ընտրական հանձնաժողովին, որի իրավասության սահմաններում է բարձրացված հարցի լուծումը: Եթե դիմում տալու համար սույն օրենսգրքով նախատեսված է վերջնաժամկետ, ապա դիմումը համարվում է պատշաճ ժամկետում ներկայացված, եթե այն մինչև վերջնաժամկետը մուտքագրվել է համապատասխան ընտրական հանձնաժողով: Ոչ իրավասու ընտրական հանձնաժողով ներկայացված դիմումները կամ վերջնաժամկետից ուշ ներկայացված դիմումները չեն քննարկվում և գրությամբ վերադարձվում են դիմումատուին՝ նշելով պատճառը:

4. Հանձնաժողովի նախագահը պատշաճ ժամկետում ներկայացված դիմումը հասցեագրում է հանձնաժողովի անդամին, իսկ դիմումի պատճենը տրամադրվում է հանձնաժո-

ղովի մյուս անդամներին: Դիմումում բարձրացված հարցերն ուսումնասիրում են հանձնաժողովի անդամները: Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ իրավունք ունի դիմումի վերաբերյալ որոշման նախագիծ ներկայացնելու՝ հարցը հանձնաժողովի նիստում քննարկելու համար: Եթե հանձնաժողովի որևէ անդամ վարչական վարույթի հարուցումը մերժելու մասին որոշման նախագիծ չի ներկայացնում, ապա վարչական վարույթը համարվում է հարուցված: Վարչական վարույթի հարուցումը մերժելու դեպքում դիմումի պատասխանը դիմումատուին ուղարկվում է հանձնաժողովի նախագահի ստորագրությամբ:

5. Վարչական վարույթի հարուցման դեպքում դիմումատուն իրավունք ունի մասնակցելու հանձնաժողովի նիստում իր դիմումի քննարկմանը, ներկայացնելու հիմնավորումներ, ունենալու ելույթ:

6. Ընտրական հանձնաժողովների որոշումները, գործողությունները (անգործությունը) վերադաս ընտրական հանձնաժողով բողոքարկելու դեպքում բողոք ներկայացնող կողմը կրում է իր ներկայացրած փաստական հանգամանքների ապացուցման բեռը, իսկ ընտրական հանձնաժողովը՝ իր կայացրած որոշման հիմքում ընկած փաստական հանգամանքների ապացուցման բեռը: Բողոքը քննող ընտրական հանձնաժողովն ի պաշտոնե կարող է ապացույցներ հայթայթել: Սույն մասով սահմանված կանոնները վերաբերում են նաև ընտրական տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու կամ ընտրությունների արդյունքներն անվավեր ճանաչելու մասին դիմումներին:

7. Տեղեկատվություն ստանալու մասին դիմումի պատասխանը դիմումատուին ուղարկվում է հանձնաժողովի նախագահի ստորագրությամբ: Եթե պահանջվող տեղեկատվությունը կամ փաստաթղթի օրինակը տեղադրված է հանձ-

նաժողովի համացանցային կայքում, ապա այդ մասին տեղեկացվում է դիմողը, և նրան դրանցից պատճեններ կամ քաղվածքներ չեն տրամադրվում:

8. Օպերատիվ լուծում պահանջող հարցերի վերաբերյալ ընտրական հանձնաժողովները ձեռնարկում են համապատասխան միջոցներ: Նման դեպքերում առանձին ակտի տեսքով որոշումների ընդունումը պարտադիր չէ»:

Նկատենք, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով սահմանված է ապացուցման պարտականությունը բաշխելու այլ կարգ.

«Անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է՝

ա) անձը՝ նրա համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում.

բ) վարչական մարմինը՝ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում:

2. Եթե սույն հոդվածի 1-ին մասի «ա» կետով նախատեսված դեպքում վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ տվյալների (տեղեկությունների) անձը կարող է իրազեկ դառնալ բացառապես տվյալ վարչական մարմնի միջոցով, ապա ապացուցման պարտականությունը դրվում է այդ վարչական մարմնի վրա:

3. Եթե սույն հոդվածի 1-ին մասի «բ» կետով նախատեսված դեպքում վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ տվյալների (տեղեկությունների) վարչական մարմինը կարող է իրազեկ դառնալ բացառապես տվյալ անձի միջոցով, ապա ապացուցման պարտականությունը դրվում է այդ անձի վրա»:

Ապացույցների պարտականության բաշխման առնչությամբ ՀՀ ընտրական օրենսգրքով առանձնահատկություններ

սահմանելը, թերևս, հետապնդում է ակնհայտ անհիմն ու մեծաքանակա դիմումներով ընտրական գործընթացը չխաթարելու, քաղաքական շահարկումների գործիք չդարձնելու նպատակ: Միաժամանակ, կարծում ենք, որ սա էական նահանջ է վարչարարության ընդհանուր կանոններից և կարող է հանգեցնել ընտրական խախտումների վերաբերյալ դիմումների անգամ ողջամիտ հոսքը սահմանափակելու կամ դրանց քննարկումը ոչ արդյունավետ դարձնելու իրավական մշակույթի:

Վերը նշված վարչարարության առանձնահատուկ կանոնները հավասարապես վերաբերում են դիտորդներին, միաժամանակ, վարչական վարույթի փուլում, ըստ ՀՀ ընտրական օրենսգրքի, դիտորդներն ունեն նաև հետևյալ իրավունքները՝

1) կարող են գրավոր դիմումի հիման վրա ստանալ թեկնածուների հայտարարագրերի պատճենները (8-րդ հոդվածի 6-րդ մաս),

2) եթե գտնում է, որ քվեարկության ընթացքում տեղի է ունեցել ՀՀ ընտրական օրենսգրքով նախատեսված քվեարկության կարգի խախտում, ապա իրավունք ունի պահանջելու, որ իր գնահատականն արձանագրվի տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում (67-րդ հոդվածի 14-րդ մաս):

Բնականաբար, ընտրական գործընթացում դիտորդներին վերապահված են մի շարք այլ իրավունքներ, սակայն դրանք անմիջականորեն չեն առնչվում վարչական վարույթի հետ, ուստի սույն վերլուծականում դրանց անդրադարձ չկա: